ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

6 (95)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 6 (95), 2018

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, տ.գ.թ.

Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
Տնտեսական գիտությունների թեկնածու

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ազլյան
Վահրամ Հովյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 6 (95), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
«Բարդությունները» ադեկվատ ընկալելու հրատապությունը 4

Արա Մարջանյան
Հայաստան - Ռուսաստան ռազմաքաղաքական դաշինքը արդի փուլում. իրողություններ, վտանգներ, հեռանկարներ 8

Սամվել Մանուկյան, Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան, Մեղա Սարիբեկյան
Հայկական հեռուստատեսությամբ հաղորդվող սերիալների բովանդակային առանձնահատկությունները 14

Կարեն Վերանյան
Հայաստանի և Ադրբեջանի գիտահետազոտական վիճակագրությունը 2008-2018թթ. 23

Անդրանիկ Հովհաննիսյան
«Ղրիմի հիմնահարցը» ներկա փուլում 30

Վահրամ Հովյան
Սիրիայի հայ համայնքը հետպատերազմյան շրջանում 36

Արմեն Մանվելյան
Էներգետիկ համաշխարհային վիճակագրությունը ըստ Բրիթիշ փեթրոլիումի տարեկան զեկույցների 43

«ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԱԴԵԿՎԱՏ ԸՆԿԱԼԵԼՈՒ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Գագիկ Հարությունյան[*]

Ներկայիս հիբրիդային իրողություններում, երբ տոտալ հակամարտություններն ընթանում են մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում (ռազմական, դիվանագիտական, գիտակրթական, մշակութային և անգամ սպորտային), գլոբալ հարթությունում գրեթե վերացել են նախկինում միջազգային հարաբերությունների վերաբերյալ եղած պատկերացումները և նորմերը: Որոշ քաղաքագետներ[1] գտնում են, որ արդի իրավիճակը հիշեցնում է 1618-1648թթ. Եվրոպայում սկիզբ առած երեսնամյա պատերազմը [1]: Միանգամայն հիմնավորված է նաև այն տեսակետը, համաձայն որի՝ «կառավարվող քաոսի» տեխնոլոգիաների[2] կիրառմամբ ընթացող ներկայիս քաղաքականությունը նպաստում է «գլոբալ կրիտիկականության» ձևավորմանը, որը վերացնում է գոյություն ունեցող աշխարհակարգի հիմքերը [2, 3]: Նման հայեցակարգի տեսական հիմնավորումն է «ինքնակազմակերպված կրիտիկականության» տեսությունը, համաձայն որի՝ ոչ գծային օրինաչափություններին ենթարկվող համակարգն իր զարգացման ընթացքում անխուսափելիորեն մոտենում է այսպես կոչված «բիֆուրկացիայի» կետին կամ, այլ խոսքերով, այն կետին, երբ փոխվում է համակարգի գործելու նախկին ռեժիմը: Դա նվազեցնում է հա-

[*] «Նորավանք» ԳԿՀ տնօրեն:

[1] *Г.Арутюнян,* Фрагментированный или «довестфальский» миропорядок, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=16546.
*Т.Бордачев,*Третья тридцатилетняя война, http://www.noravank.am/rus/articles/detail.php?ELEMENT_ID=17368&sphrase_id=67565

[2] Այդ տեխնոլոգիաները մշակվել են ամերիկյան Սանտա Ֆե քաղաքում 1984թ. հիմնադրված «Միջդիսցիպլինար հետազոտությունների» ինստիտուտում (որն անվանում են նաև «Կրիտիկական բարդության ինստիտուտ»), որի նպատակներից էր, մասնավորապես, քաոսի վերաբերյալ տեսական ֆիզիկայի դրույթները կիրառական աշխարհաքաղաքական նպատակներին «հարմարեցնելը»: Այս վերջին մոտեցումը գործնականում կիրառվեց աշխարհաքաղաքական գլոբալ նշանակություն ունեցող «Արաբական գարուն» նախագծում:

մակարգի կայունությունը, և արդյունքում՝ անգամ աննշան փոփոխությունները կարող են հրահրել անկանխատեսելի հետևանքներով բուռն պրոցեսներ, որոնք փոխում են ողջ համակարգի պատկերը և բովանդակությունը: Հատկանշական է, որ նման իրավիճակում անգամ կոնկրետ վտանգների վերացումը կարող է հանգեցնել այլ անցանկալի տարբերակների առաջացման հավանականությանը [2]:

Ինչպես հետևում է վերոնշյալից, արդի ոչ գծային օրինաչափություններին ենթարկվող տուրբուլիզացված աշխարհակարգը գտնվում է որակական փոփոխությունների փուլում: Դա վկայում է այն մասին, որ ստեղծված իրավիճակում, առավել քան երբևիցե նախկինում, ազգային անվտանգության համատեքստում անհրաժեշտ է կարևորել ստեղծված իրողությունների ադեկվատ ընկալումը և դրանց նույնքան ադեկվատ արձագանքելու կարողությունը: Նման մոտեցումը ենթադրում է խոր, համակարգված գիտելիքներ և իմացություններ ինչպես սեփական, այնպես էլ տարածաշրջանային ու գլոբալ ակտորների ոչ նյութական և նյութական ռեսուրսների վերաբերյալ: Ի լրումն՝ պետք է նաև հաշվի առնել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ներկայի աննախադեպ զարգացման ժամանակաշրջանում հանրություններում արտաքին աշխարհի հանդեպ ձևավորվել են նաև զուտ վիրտուալ պատկերացումներ, որոնցում էլ նա «ապրում ու գործում է» (կամ, ինչպես դիպուկ նկատել է Գ.Պոչեպցովը, եթե «իրական աշխարհը գոյություն ունի անկախ մարդու պատկերացումներից, ապա վիրտուալ աշխարհը կառուցվում է համաձայն մարդու պատկերացումների»)[3]:

Ակնհայտ է, որ միայն վերոնշյալ բոլոր հանգամանքները հաշվի առնելու պարագայում է հնարավոր ամրագրել սեփական հոգևոր, մտավոր (հոգևոր, մտավոր, կազմակերպչական և այլն) և նյութական ոլորտների (ռազմաքաղաքական, տնտեսական և այլն) «կոորդինատները» գլոբալ հարթությունում: Նման մոտեցումը թույլ կտա ոչ միայն վարել արդյունավետ արտաքին քաղաքականություն, այլև մշակել համապատասխան ռազմավարություն ներքին հիմնախնդիրների վերհանման և լուծման ուղղությամբ:

[3] *Г.Почепцов,* Виртуальность не знает поражений от реальности, только другая виртуальность может ее победить, http://hvylya.net/analytics/society/virtualnost-ne-znaet-porazheniy-ot-realnosti-tolko-drugaya-virtualnost-mozhet-ee-pobedit.html

Այս վերջին խնդրի պարագայում անհրաժեշտ է խիստ կարևորել ինչպես սեփական, այնպես էլ այլոց համակարգային նշանակություն ունեցող ենթակառուցվածքների կամ, այլ խոսքերով՝ *կրիտիկական ենթակառուցվածքների վերհանումը,* որոնց խոցումը կարող է հանգեցնել անդառնալի կորուստների և անգամ ողջ համակարգի փլուզման: Միևնույն ժամանակ, կրիտիկական նշանակություն կարող են ունենալ ոչ միայն առանձին կառույցներ կամ կառույցների համախումբը, այլ նաև ամբողջ ոլորտներ, որոնցում տիրող իրավիճակը և զարգացման մակարդակը պայմանավորում են այլ ոլորտների անվտանգությունը և արդյունավետությունը [4]: Ավելին, համաձայն մեր մոտեցումների՝ անգամ նման ընդհանրական դասակարգման պարագայում կարելի է վերհանել այնպիսի ոլորտ, որի զարգացածության մակարդակը հանդիսանում է մնացյալ *բոլոր* ոլորտների անվտանգության և զարգացման նախապայմանը, և նման ոլորտը կարելի է պայմանականորեն անվանել *«կրիտիկական ոլորտների կրիտիկական ոլորտ»:* Մեր պատկերացումները թույլ են տալիս պնդել, որ նման անվանմանը կարող է հավակնել *հոգևոր-գիտելիքային* ոլորտը, որի կատարելության և զարգացման մակարդակն ուղղակի կամ անուղղակի պայմանավորում է այլ ուղղություններում ընթացող զարգացումների արդյունավետությունը:

Հարկ է նաև նկատել, որ ներկայի ոչ գծային բնույթի հիմնախնդիրների և պրոցեսների մեջ խորամուխ լինելը հնարավոր է միայն ժամանակային գործոնը հաշվի առնելու պարագայում: Այս համատեքստում դա նշանակում է, որ այս կամ այն երևույթն ադեկվատ ընկալելու համար բավական չէ սահմանափակվել կոնկրետ դիտարկման ժամանակահատվածով և համադրել ստացված արդյունքներն անցյալի նախադեպերի հետ: Արդի մոտեցումները պահանջում են, որպեսզի երևույթները և գործընթացները քննարկվեն նաև ապագայում դրանց փոխակերպումների վերաբերյալ փորձագիտական հնարավորինս հիմնավորված պատկերացումների հիման վրա: Անցյալի, ներկայի և հնարավոր ապագայի կամ, այսպես կոչված, «ժամանակային տրիադայի» համատեքստում փոխկապակցված մոտեցումների ձևավորումն էապես մեծացնում է ոչ գծային զարգացումներն ադեկվատ ընկալելու հավանականությունը և այդպիսով նպաստում է

դրանց առավել իմաստավորված արձագանքելու կարողությանը[4]:

Վերը ներկայացված խիստ համառոտ նկատառումներն առավել ակտուալ են այն երկրների և հանրությունների համար, որոնք այս կամ այն պատճառներով արդի աշխարհաքաղաքական-աշխարհագաղափարախոսական զարգացումների մասն են հանդիսանում: Ակնհայտ է, որ Հայաստանը (ՀՀ և ԱՀ) և Հայկական հանրությունը (արդի, պատմական Հայաստանում և այլ երկրներում բնակվող մեր հայրենակիցները), գտնվելով Ադրբեջանի հետ պատերազմական իրավիճակում և Թուրքիայի հանդեպ պահանջատիրության դիրքերում, դասվում են նման երկրների և հանրությունների շարքին: Ակնհայտ է նաև, որ մեր հիմնախնդիրների լուծման ալգորիթմների ձևավորումը և դրանց իրագործումը ենթադրում են Հայկական հանրության հոգևոր-մտավոր ներուժի, թերևս, անգամ տոտալ մոբիլիզացիա: Միևնույն ժամանակ, ստեղծված իրավիճակում երբեք ավելորդ չեն նաև այդ հիմնախնդիրների առանձին քննարկումները և վերլուծությունները: Մասնավորապես, կարծում ենք, որ ադեկվատ ընկալումների հարցում առաջնային խնդիրների շարքում է գտնվում ՀՀ հասարակության գիտելիքային ներուժի կոորդինատների հնարավորինս ճշգրտումն արդի տեղեկատվական հեղափոխությունների ժամանակաշրջանում:

Գրականություն

1. *Գ.Հարությունյան,* Ֆրագմենտացված կամ «մինչվեստֆալյան» աշխարհակարգ, Գլոբուս, #2(91), 5, 2018:
2. *А.Бартош,* Агрессия нового типа, НВО, #18, (996), 2018.
3. «Տեղեկատվական անվտանգություն», *Նախագծի ղեկավար և գլխ. խմբագիր Գ.Հարությունյան,* 317 էջ, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2017:
4. Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն *(հետազոտական ծրագրի համակարգողներ Ս.Մանուկյան, Գ.Հարությունյան),* «Նորավանք» ԳԿՀ, 218 էջ, 2015, http://www.noravank.am/arm/books/details.php?ELEMENT_ID=1326023.03.2015

[4] Բնորոշ է, որ ԱՄՆ-ում, որտեղ ընթացիկ գործընթացների վերլուծությունը և կանխատեսման մշակույթը, շնորհիվ բազմաթիվ «ուղեղային կենտրոնների» կողմից կատարված մշակումների, գտնվում է շատ բարձր մակարդակի վրա (տե՛ս, օրինակ, *Г.Арутюнян*, Распад «системы» и формирование будущего, НОФ «Нораванк», Ереван, 2011), ձևավորվել է նաև հատուկ հանձնաժողով, որն ուսումնասիրում է Հռոմեական կայսրության փլուզման պատճառները: Այդ աշխատանքային խմբի ուսումնասիրությունների արդյունքներն օգտագործվում են սեփական գերտերության կայունությունը պահպանելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆ – ՌՈՒՍԱՍՏԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎՏԱՆԳՆԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Արա Մարջանյան[*]

Իրողություններ

Հայաստանի և Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական դաշինքի իրողությունները ձևավորող բազմաթիվ գործոններից առանձնացրել ենք հետևյալը:

«Ռուսաստանի ռազմական դաշնակիցները քիչ են». այսպես են սկսվում *Վալդայան ակումբի* 2017թ. թիվ 66 «Գրառումները» [1][1]: «Պարտավորեցնող պայմանագրեր, երբ մեկ կողմի վրա հարձակումը հավասարվում է հարձակման բոլորի վրա, Ռուսաստանն ունի միայն Աբխազիայի և Հր.Օսիայի հետ»,- ասվում է այստեղ: Եվ շարունակվում է. «Այլ պայմանագրերը, անգամ այն երկրների հետ, որոնք համարվում են Ռուսաստանի ամենամոտ դաշնակիցները, չունեն անվտանգության փոխադարձ երաշխիքների այսպիսի ավտոմատ մեխանիզմներ: Մասնավորապես, ՀԱՊԿ շրջանակում այս առումով պարտավորությունները զգալիորեն ավելի մեղմ են, քան ՆԱՏՕ-ի դեպքում: Եվ սա պարզորոշ երևում է համապատասխան դրույթների համեմատությունից»: Ու «Գրառումները» բերում են հետևյալ ցիտատները (կրկնում ենք ըստ [1]-ի).

<u>Հյուսիսատլանտյան դաշինք, Հոդված 5.</u> «Կողմերը համաձայնում են, որ զինված հարձակումը Կողմերից մեկի կամ մի քանիսի վրա Եվրոպայում կամ Հս.Ամերիկայում կդիտարկվի որպես հարձակում ընդդեմ բոլորի...»:

<u>ՀԱՊԿ պայմանագիր, Հոդված 2.</u> «Անդամ պետություններից մեկի կամ մի քանիսի անվտանգությանը, կայունությանը, տարածքային ամբողջականությանը և սուվերենությանը սպառնալիքի գոյացման դեպքում անդամ պետություններն անհապաղ գործարկում են համատեղ խորհրդատ-

[*] «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն գիտության գծով, ՄԱԿ ԶԾ ազգային փորձագետ, տ.գ.թ., ա.գ.ա.:

[1] Այս հարցի առնչությամբ տե՛ս [2]:

վության մեխանիզմները՝ նպատակ ունենալով համադրել իրենց դիրքորոշումները օգնություն տրամադրելու համար, մշակում և ընդունում են միջոցներ վտանգը վերացնելու ուղղությամբ»:

Ելնելով այսպիսի, ինչպես կտեսնենք՝ ընտրովի, հետևաբար և խեղաթյուրված համեմատությունից՝ եզրակացվում է, որ 1. դաշնակիցների հետ հարաբերություններում ՀԱՊԿ այս «պրագմատիկ» մոտեցումը համահունչ է պայմանագրի տառին և ոգուն (ինչը, ինչպես կտեսնենք, սխալ է փաստացի); 2. այն համապատասխանում է Ռուսաստանի ազգային շահերին (ինչը, կարծում ենք, սխալ է կոնցեպտուալ առումով): Ակումբի կարծիքով, դաշինքների համակարգն առաջին հերթին պետք է ապահովի Ռուսաստանի ներկայությունը որպես ազդեցիկ ուժ իր համար կարևոր տարածաշրջաններում: Բայց, միևնույն ժամանակ, Ռուսաստանը պետք է խուսափի սեփական դաշնակիցների մանիպուլյացիաներին ենթարկվելուց: Օրինակ, պարզաբանում են «Գրառումները», «Հայաստանի հետ հարաբերությունները ՌԴ-ի համար կարևոր են Անդրկովկասում իր ներկայությունը պահպանելու և ամրապնդելու առումով: ՌԴ-ն Հայաստանին տրամադրում է և կշարունակի տրամադրել ռազմական օգնություն և կսատարի տնտեսական զարգացմանը: Բայց Ռուսաստանը կխուսափի այնպիսի իրավիճակներից, երբ իր հակառակ կոալիցիայում կհայտնվի Ադրբեջանը՝ մեկ կամ մի քանի հարևան պետությունների հետ միասին»:

Պետք չէ միջուկային ֆիզիկոս լինել՝ հասկանալու համար, որ ողջ խնդիրն այստեղ այն է, թե ինչ են հասկանում «Գրառումների» հեղինակները «դաշնակիցների մանիպուլյացիաներ» ասելով: Եվ ի՞նչ կլինի, եթե, օրինակ, Ադրբեջանը «մեկ կամ մի քանի հարևան պետությունների հետ հայտնվի ՌԴ հակընդդեմ կոալիցիայում»: Ու սա՝ ոչ թե քմահաճույքի կամ մանիպուլյացիաների արդյունքում, այլ աշխարհաքաղաքականության դաժան օրենքների տրամաբանությամբ:

Ինչևէ, այսպիսին են իրողությունները: Եվ ոչ միայն Վալդայան ակումբի «Գրառումների» էջերում, այլև ՌԴ իշխանական վերնախավի շատ ավելի լայն շրջանակների ընկալումներում:

Վտանգներ

Հայ-ռուսական ռազմաքաղաքական դաշինքին սպառնացող վտանգների լայն բազմության մեջ գլխավոր վտանգը, կարծում ենք, հիմնարար փաս-

տաթղթերի ահա այսպիսի ընտրական ընթերցումն է և այն հետևությունները, որոնց անհրաժեշտաբար հանգում են դրանց այսպիսի «պրագմատիկ» ընթերցմամբ: Պարզաբանենք սա հետևյալ համեմատական աղյուսակով.

Աղյուսակ 1.

ՌԴ դաշնակիցների հետ հարաբերություններում «Իդեոլոգների» և «Պրագմատիկների» մոտեցումներն ըստ [1]-ի

«Իդեոլոգներ»	«Պրագմատիկներ»
1. Ռուսաստանի դաշնակիցները քիչ են: Հետևաբար, պետք է ամրապնդել կապերը եղածների հետ ու ջանալ ձեռք բերել նորերը:	1. Հակառակը, Ռուսաստանի այս «փայլուն մեկուսացվածությունն» օգնում է՝ մեր արտաքին քաղաքական շահերը հետապնդելիս գործել ազատ ձեռքերով, առանց կապանքների:
2. Ռուսաստանը պետք է գաղափարախոսական այլընտրանք առաջարկի «Արևմուտքին» (և/կամ «մահմեդական արմատականությանը»):	2. Գաղափարախոսության բացակայությունը և մեսիականությունից հրաժարումն է, որ թույլ են տալիս ՌԴ-ին պահպանել իր աշխարհաքաղաքական բարձր դիրքը՝ ծախսելով դրա համար ավելի քիչ ռեսուրսներ, քան ԽՍՀՄ-ը:
3. Ռուսաստանը պետք է ամրապնդի դիրքերն ազդեցության իր ավանդական տարածաշրջաններում՝ հետխորհրդային տարածքում և Բալկաններում:	3. Ռուսաստանը պետք է կայունացնի *լիմիտրոֆ* տարածքները միայն այն չափով, որն անհրաժեշտ է իր տարածքների անվտանգությունն ապահովելու համար, և թույլ չտա դաշնակիցներին իրեն ներքաշել իրեն ոչ անհրաժեշտ կոնֆլիկտների մեջ:

«Պրագմատիկների» այսպիսի մոտեցումը, կարծում ենք, արատավոր է: Նախ՝ նրա համար, որ այն հիմնվում է հիմնարար փաստաթղթերի ընտրովի ընթերցման վրա: Այսպես, ՆԱՏՕ դաշինքի 5-րդ հոդվածի ամբողջական տեսքը հետևյալն է.

Հյուսիսատլանտյան դաշնագիր, Հոդված 5. «Կողմերը համաձայնում են, որ զինված հարձակումը Կողմերից մեկի կամ մի քանիսի վրա Եվրոպայում կամ Հյուսիսային Ամերիկայում կդիտարկվի որպես հարձակում ընդդեմ բոլորի, հետևաբար, նրանք համաձայնում են, որ եթե նման զինված հարձակում կատարվի, ապա նրանցից յուրաքանչյուրը, ըստ ՄԱԿ կանոնադրության 51-րդ հոդվածի, որով ճանաչվում է անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքը, կօժանդակի այն կողմին կամ կողմերին, որոնց վրա հարձակում է կատարվել՝ անմիջապես անհատական կամ մյուս կողմերի հետ համախմբված գոր-

ծողություն ձեռնարկելով, ներառյալ զինված ուժի կիրառումը: Նման գործողության նպատակն է Հյուսիսատլանտյան տարածաշրջանում անվտանգության վերականգնումն ու պահպանումը»[2]:

Դե, իսկ ՀԱՊԿ պայմանագրի 4-րդ հոդվածը, որը «Գրառումների» հեղինակները, չգիտես ինչու, «մոռացել» են ցիտել, աներկբա ասում է, որ.

ՀԱՊԿ պայմանագիր, Հոդված 4. «…Եթե պայմանագրի մեկ մասնակից ենթարկվում է ագրեսիայի, ապա դա դիտարկվում է որպես ագրեսիա բոլոր մասնակից պետությունների հանդեպ: Ագրեսիայի ենթարկված պետության խնդրանքի դեպքում մնացյալ բոլոր պետությունները նրան տրամադրում են անհրաժեշտ օգնություն, ներառյալ ռազմական օգնություն, ինչպես նաև կատարեն իրենց տրամադրության տակ եղած միջոցներով, ըստ ՄԱԿ կանոնադրության 51-րդ հոդվածի շրջանակներում նախատեսված կոլեկտիվ անվտանգության իրավունքի»[3]:

Այսինքն՝ ճիշտ այն, ինչ ասվում է ՆԱՏՕ պայմանագրի 5-րդ հոդվածում՝ ընդհուպ մինչև հղում ՄԱԿ կանոնադրության 51-րդ հոդվածի վրա:

Վերջապես, [1]-ի հեղինակները մոռացել են ցիտել նաև «ՀԱՊԿ Կոլեկտիվ անվտանգության հայեցակարգ» կոչվող փաստաթուղթը, որում հստակ սահմանված են դաշինքի հայեցակարգային հիմունքները. 1. անվտանգության միասնականության դրույթը, այսինքն՝ ՀԱՊԿ անդամ պետության հանդեպ ագրեսիան դիտարկվում է որպես ագրեսիա բոլորի հանդեպ; 2. մասնակիցների անվտանգության ապահովման գործում մասնակից պետությունների հավասար պատասխանատվությունը[4]:

Բայց այս «պրագմատիկ մոտեցումը» արատավոր է նաև այն պատճառով, որ արհեստածին կերպով ջանում է միավորել Վ.Ցիմբուրսկու «կղզի-Ռուսաստան» [3] հայեցակարգի որոշ տարրեր Դ.Ռամսֆելդի ցինիկ «առաքելությունն է ձևավորում դաշինքը, այլ ոչ թե հակառակը» 2001թ. բանաձևին [4][5]: Հասկանալի է, մենք չէ, որ պետք է որոշենք, թե ինչպես պետք է Ռուսաստանը կառուցի իր դաշնակցային հարաբերությունները: Բայց պարտավոր ենք մատնանշել հետևյալը. ցինիզմը և պրագմատիզմը աշխարհաքաղաքականությունում առկա են դարեր ի

[2] https://www.nato.int/cps/ru/natohq/official_texts_17120.htm?selectedLocale=hy
[3] http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126
[4] http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=130
[5] Լուսահոգի Վադիմ Լեոնիդովիչը, թերևս, զարմացած կլիներ այսպիսի հարևանությունից:

վեր: Եվ այստեղ կան արդեն դրա հմուտ վարպետներ: Իսկ ինչպես ասում է հայկական ասույթը՝ «չարժե սատանի *մայլում քյանդրբազություն* անել»: Ոչ մի լավ բանի սա չի հանգեցնի:

Կրկնենք: Հայաստանի և Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական դաշինքին սպառնացող գլխավոր վտանգը մենք համարում ենք ոչ թե բելառուսա-չինական «Պոլոնեզները», իսրայելական «Լորաները», ռուսական ТОС-երը, թուրքական «Գասիրգաները» կամ «SOM»-երը ադրբեջանական բանակում: Ոչ թե Նախիջևանում արբանյակների ղեկավարման պահեստային կենտրոնը կամ թուրք ռազմական հրահանգիչներին: Ոչ էլ անգամ Կասպիցի սահմանազատման գործում Ռուսաստանի վերջերս արձանագրած նահանջը կամ Ռուսաստանի տեխնոլոգիական զարգացման դանդաղումը: Այլ դաշնակիցների հետ հարաբերությունների հարցում այսպիսի «պրագմատիկ», իսկ իրականում՝ արատավոր մոտեցումը:

Հեռանկարներ

Հեռու ենք այն մտքից, որ ի վիճակի ենք հայեցակարգային առումով ազդել դաշնակցային հարաբերությունների ձևավորման վրա Մոսկվայում կամ, առավել ևս՝ Աստանայում ու Մինսկում: Կցանկանայինք միայն ընդգծել դաշնակցային հարաբերությունների այն տարրերը, որոնք, մեր կարծիքով, պահպանում են իրենց ողջ օգտակարությունն ու արդյունավետությունը թե՛ «պրագմատիկների» *ad hoc* մոտեցման, թե՛ «գաղափարախոսների» ավելի խորացված ընկալումների պարագայում: Հակիրճ դրանք կարելի է վերնագրել հետևյալ կերպ. «Ապահովել դաշնակից տերությունների տեխնոլոգիական և ենթակառուցվածքային կապակցվածությունը քաղաքական առնվազն 2 – 3 էլեկտորալ ցիկլերի հեռանկարում»:

Այս առումով արդեն իրականացված են մի շարք կարևոր քայլեր: Նկատի ունենք ՀՀ և ՌԴ միացյալ ռազմական խմբավորման ձևավորումը, ՀՕՊ, հուսով ենք՝ նաև ՀՀՊ համատեղ հրամանատարության ստեղծումը, Հայաստանում ՌԴ 102-րդ ռազմաբազայի գտնվելու ժամկետի երկարաձգումը մինչև 2044թ.: Սակայն այս ամենը, արդի աշխարհի հիբրիդային սպառնալիքների պայմաններում, մեր կարծիքով՝ բավարար չէ:

Բանն այն է, որ այս, կրկնենք՝ կարևոր քայլերն ապահովում են միայն ենթակառուցվածքային կապակցվածություն, և միայն բուն ռազ-

մական ոլորտում: Սակայն քիչ բան են տալիս, օրինակ՝ էներգատրանսպորտային կապակցվածության առումով կամ տեխնոլոգիական ու տնտեսական ամբողջական ոլորտներում: Առավել ևս՝ մեր երկրների հանրությունների և իշխանական վերնախավերի կողմից տարածաշրջանում և ողջ աշխարհում ներկայում ընթացող բուռն գործընթացների փոխլրացնող և փոխամրապնդող ընկալումների ձևավորման գործում: Այս տեսանկյունից, կարծում ենք, առաջնահերթ են հետևյալ խնդիրները.

1. 2026 թվականից սկսած և 50-70 տարի ժամանակային հորիզոնում ապահովել Հայաստանում ատոմային էներգետիկայի ողջ սեգմենտի առկայությունն ու զարգացումը;
2. Վերակենդանացնել և զարգացնել երկարաժամկետ և բարձրտեխնոլոգիական համագործակցությունն արբանյակային ունակությունների, լազերային տեխնիկայի և միկրոէլեկտրոնիկայի ոլորտներում;
3. Վճռականորեն իրագործել Հայաստանն ապաշրջափակող «Հյուսիս-Հարավ» էներգատրանսպորտային ենթակառուցվածքի ստեղծումը:

Իսկ ամենակարևորը, մեր կարծիքով, Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական դաշինքը բուն քաղաքական, եթե կուզեք՝ աշխարհաքաղաքական բովանդակությամբ հագեցնելու խնդիրն է:

Չէ՞ որ Հայաստանը, ինչպես և Ռուսաստանը, ավարտված աշխարհաքաղաքական ծրագրեր չեն: Ինչպե՞ս մենք դրանք կավարտենք, և մե՞նք է, որ պիտի դրանք ավարտենք. ահա հարցեր, որոնք պահանջում են խորացված և հիմնավոր պատասխաններ: Խոսել մեր երկրների ռազմաքաղաքական դաշինքի հեռանկարների մասին արժե առաջին հերթին հենց այս պատասխանների համատեղ որոնման ծիրում:

Գրականություն

1. *Силаев Н., Сушенцов А.,* Союзники России и геополитический фронтир в Евразии. Валдайские записки, № 66, апрель, 2017.
2. *Арутюнян Г.А., Марджанян А.А.,* Духовно-технологические ресурсы и вопросы союзничества в гибридных реалиях, «21-й ВЕК», 4 (45), 2017.
3. *Цымбурский В.Л.,* Остров Россия. Циклы похищения Европы, http://old.russ.ru/antolog/inoe/cymbur.htm#f1.
4. Secretary of Defense Donald H. Rumsfeld Interview with Bob Schieffer on CBS "Face the Nation". Sept. 23, 2001, http://www.tep-online.info/laku/usa/whitehou/dod/23092001_1.htm.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՂՈՐԴՎՈՂ ՍԵՐԻԱԼՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սամվել Մանուկյան[*], *Դիանա Գալստյան*[**], *Լիլիթ Հակոբյան*[***], *Մեղա Սարիբեկյան*[****]

Հայաստանի հեռուստաթերում սերիալներին է տրամադրվում եթերաժամանակի ամենամեծ հատվածը: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում Հայաստանի և Ադրբեջանի ինֆորմացիոն դաշտի ուսումնասիրության ծրագրի շրջանակներում ստացված տվյալները հաստատում են այդ փաստը: Մասնավորապես, 2017թ. սեպտեմբերի 4-ից մինչև 10-ը ժամանակահատվածում, Հայաստանի առավել դիտվող «Արմենիա», «Շանթ» և «Հ1» հեռուստաալիքներով[1], «փրայմ թայմում» (18:00 – 24:00) ցուցադրված հեռուստահաղորդումների ընդհանուր ծավալում, սերիալներին տրամադրվել է ժամանակի համապատասխանաբար 64.1%, 81.3% և 43.5%-ը (տե՛ս *Աղյուսակ* 1):

Այդ պատճառով հեռուստատեսության բովանդակության ուսումնասիրության շրջանակում սերիալների ուսումնասիրությունն ունի առանձնահատուկ նշանակություն: Դրանց ուսումնասիրությունը կարևոր է ներկայացվող արժեքների և վարքային մոդելների տարածման տեսանկյունից՝ հաշվի առնելով դրանց հասարակական նշանակությունը:

Ուսումնասիրության ընթացքում սերիալները պայմանականորեն դասակարգվել են չորս խմբում.

- Հեռուստաալիքների կողմից նկարահանվող սերիալներ;

---

[*] «Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, սոց.գ.թ.:
[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:
[***] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:
[****] ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրիատի IV կուրսի ուսանողուհի:
[1] *Մ.Մանուկյան*, «Հեռուստալսարանի դինամիկան Հայաստանում 2012-2016թթ.», «21-րդ ԴԱՐ», թիվ 6 (76), 2017:

Աղյուսակ 1.

«Արմենիա», «Շանթ» և «Հ1» հեռուստաալիքների հեռարձակումներն ըստ հեռուստահաղորդումների տիպերի ծավալների 2017թ. սեպտեմբերի 4-ից մինչև 10-ը ժամանակահատվածում[2]

Հաղորդման տիպ	Հեռուստաալիք			Ընդամենը
	Արմենիա	Հ1	Շանթ	
Սերիալ	64.5%	43.5%	81.3%	64.4%
Գ/Ֆ	0.0%	33.0%	0.7%	11.5%
Լուրեր	11.1%	5.5%	6.3%	7.2%
Ժամանցային	9.1%	1.8%	5.1%	5.0%
Հանելուկ	3.7%	4.7%	0.0%	2.5%
Լրատվական-վերլուծական	5.2%	1.7%	0.0%	1.8%
Ռոմինտանան	5.0%	0.1%	0.9%	1.6%
Քաղաքական/վերլուծական	1.5%	0.0%	2.7%	1.5%
Աշխարհային/վերլուծական	0.0%	3.3%	0.0%	1.1%
Տիեզերական	0.0%	1.2%	1.3%	0.9%
Ճանաչողական/աշխարհային	0.0%	1.8%	0.5%	0.8%
Սպորտ	0.0%	1.8%	0.0%	0.6%
Ռժշկական հաղորդում	0.0%	0.0%	1.2%	0.5%
Հասարակական/վերլուծական	0.0%	0.8%	0.0%	0.3%
Վ/Ֆ	0.0%	0.7%	0.0%	0.2%
Ընդամենը	100.0%	100.0%	100.0%	100.0%

- Հնդկական սերիալներ;
- «Ժամանցային սերիալներ» կամ սիթքոմներ՝ տվյալ հեռուստաալիքի արտադրության հումորային ժանրի սերիալներ, օրինակ՝ «Արմենիա» հեռուստաընկերության «Դոմինոն» և «Ֆուլ Հաուսը»;
- «Ֆիլմաշար սերիալներ», որոնք միմյանց հետ սյուժետային կապ չունեցող սերիաներ են:

Առկա թեմաները, արժեքներն ու նորմերը, ագրեսիայի առկայությունը և սերիալներում գործածվող լեզուն ուսումնասիրվել են առավել վարկանիշային սերիալների միջոցով, մասնավորապես՝ «*Նռան հատիկ» («Արմենիա»), «Օտարը» («Շանթ»), «Բացիր աչքերդ» («Հ1»*)[3]: Յուրաքանչյուր սերիալից քանակական և որակական վերլուծության է ենթարկվել 5-ական սերիա: Որպես վերլուծության միավոր ընտրվել է առանձին

[2] *Ս.Մանուկյան, Դ.Գալստյան, «Ինչ են մատուցում լսարանին Հայաստանի հեռուստաալիքները», «Նորավանք» ԳԿՀ, « Գլոբուս», թիվ 9, 2017:*

[3] Youtube-ում դիտումների քանակով առաջատարն է «Նռան հատիկը», որի դիտումները հասնում են միջինը 300.000-ի (իսկ առաջին սերիան՝ 793 324 դիտում ունի), մինչդեռ «Օտարը» և «Բացիր աչքերդ» սերիալները գրեթե հավասար դիտումներ ունեն՝ մոտ 50.000:

տեսարանը, որի տևողությունը միջինը 1-1.5 րոպե է, ընդհանուր տեսարանների քանակը կազմել է 629 (մանրամասն տե՛ս *Աղյուսակ 2*).

Աղյուսակ 2.

Տեսարանների քանակը և տևողությունը սերիալներում

Սերիալի անունը	Սերիայի համարը	Տեսարանների քանակը	Տեսարանի միջին տևողությունը, ժ:ր:վ	Սերիայի տևողությունը, ժ:ր:վ
Բացիր աչքերդ	1	58	0:00:34	0:32:47
	2	46	0:00:45	0:34:28
	3	36	0:01:03	0:37:38
	4	41	0:00:55	0:37:27
	5	49	0:00:48	0:39:12
Ընդամենը		**230**	**0:00:47**	**3:01:32**
Նռան հատիկ	65	63	0:00:34	0:35:45
	66	73	0:00:30	0:36:06
	67	27	0:01:24	0:37:49
	68	59	0:00:38	0:36:54
	69	71	0:00:31	0:36:44
Ընդամենը		**293**	**0:00:38**	**3:03:18**
Օտարը	1	35	0:01:28	0:51:17
	2	17	0:02:20	0:39:37
	3	19	0:02:12	0:41:46
	4	23	0:01:49	0:41:55
	5	12	0:03:04	0:36:44
Ընդամենը		**106**	**0:02:00**	**3:31:19**
Ընդամենը	**15**	**629**	**0:00:55**	**9:36:09**

Հեռուստասերիալների թեմաները: Հեռուստասերիալներում ներկայացված հիմնական թեմաներն են՝ իշխանություն և փող, սեր և ատելություն, արդարություն և սոցիալական անհավասարություն, ընտանիք և սերունդների հարաբերություններ, հայրենիք և բանակ, ընկերություն, կրթություն և այլն: Թեմաների գերակայությունները կախված են սերիալի բովանդակությունից: Արժեքներն ու նորմերը «միահյուսված» են և արծարծվում են թեմաների միջոցով:

Արժեքները և նորմաները հեռուստասերիալներում

1. «***Սոցիալական անհավասարությունը***» ամենածավալուն ու շրջանառվող թեման է: Հասարակությունը խիստ բևեռացված է ներկայացվում, իս-

պառ բացակայում է «միջին» քաղաքացին: Հերոսները կամ հիերարխիայի բուրգի վերևում են, կամ ներքևում ու սպասարկում են վերին խավի շահերը: «Ներքևինները» ներկայացվում են որպես անզոր, ենթակա և համակերպվող: Հարկ է նշել, որ հակառակ կողմը՝ «վերևինները», նույնպես ունեն ընդգծված բացասական երանգներ՝ հղփացած, անօրեն ու ինքնավստահ: Բարձր խավին է պատկանում միայն հարուստը և իշխանավորը: Նման հատվածային ներկայացված սոցիալական իրականությունը բազմակի կրկնությունների հետևանքով ստեղծում է իրականության համապարփակ պատկերի տպավորություն:

2. «***Փողը***»: Սոցիալական անհավասարության համատեքստում ձևավորվում է փողի՝ որպես ամենագերակա արժեքի ընկալումը:

3*. «Ընտանիք»*: Ընտանիքը ներկայացված է մակերեսային: Բոլոր ընտանիքներում հարաբերությունները կոնֆլիկտային են: Սերիալներում, որպես կանոն, բացակայում է լիարժեք և երջանիկ ընտանիքը: Իսկ եթե որևէ ընտանիքում բացակայում են կոնֆլիկտները, ապա ընտանիքի անդամներից որևէ մեկը պարտադիր հիվանդ է, իսկ ընտանիքը՝ ծանր ֆինանսական վիճակում: Ծնողական սերն արտահայտվում է միայն զոհաբերականության միջոցով:

Սերիալում, որպես կանոն, առկա է ընտանեկան բռնություն[4]: Թեմայի շրջանակներում լուծման եղանակ է առաջարկվում իրավիճակին համակերպվելը: Սերիալներում ներկայացված ընտանիքներում կինն ունի խիստ սահմանափակ իրավունքներ, մասնավորապես՝ զրկված է իր կարծիքն ազատ արտահայտելու հնարավորությունից:

Ընտանիքներում արծարծվում է նաև սերունդների միջև փոխհարաբերությունների հարցը:

4*. «Սիրո» թեման* առանցքային է բոլոր սերիալներում: Դրա ֆունկցիան սերիալի դիտողականության ապահովումն է: Սերը նույնպես, որպես կանոն, պարզունակացվում է: Գերակշռում են բացասական հուզական ապրումները, բացակայում են սիրո մեջ երջանիկ զույգերը: Հաճախ սիրո թեման ներկայացվում է ընտանիքի և ընկերության թեմաներին զուգահեռ: Ծնողական սերը ներկայացվում է որպես հանուն երեխայի եր-

[4] Մանրամասն տե՛ս *Անի Կոջոյան, Աննա Գևորգյան*, «Առնականությունն ու գենդերային բռնությունը հայկական հեռուստասերիալներում», *http://www.ysu.am/files/Reserch%20paper%2003.09.2014..pdf*

ջանկության ինքնազոհություն, իսկ որդիական սերը դրսևորվում է որպես ծնողի կամքի կատարում:

5. ***«Ընկերությունը»*** չի ներկայացվում որպես արժեք: Այն առավելապես ներկայացված է որպես ընկերներից մեկի շահագործում մյուսի կողմից: Ընկերությունը միասին ժամանակ անցկացնելն է և զվարճանքը: Սակայն հարկ է նշել, որ «Հ1»-ի վերջին սերիալներում առկա է նաև ընկերության՝ որպես անշահախնդիր օգնության, հատկանիշը: Այն ցուցադրվում է ավագ սերնդի մարդկանց միջև ընկերության միջոցով:

6. ***«Հայրենիքի» թեման,*** որպես կանոն, շաղկապվում է բանակի թեմային: Կարևորվում են զինվորի դերը, բանակում ծառայելու, հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտությունը: Մի դեպքում առկա է զինվորի հերոսացում, իսկ մյուս դեպքում ծառայելը ներկայացվում է որպես կյանքի կարևոր, բայց բնականոն ընթացք, այնպես, ինչպես ուսումը կամ աշխատանքը: Առաջին դեպքում ծառայելը հանգեցվում է հանուն հայրենիքի զոհվելուն, մյուս դեպքում ծառայելը ներկայացվում է դրական ֆոնով, որը նպաստում է անձի կայացմանն ու հասունացմանը:

Հեռուստասերիալների լեզուն: Սերիալներում կիրառվող լեզուն, որպես կանոն, առօրյա խոսակցական լեզուն է, հաճախ՝ գռեհկացված: Սերիալների որակի բարձրացման հարցում մաքուր հայերենի գործածումը պետք է սահմանել որպես կարևորագույն առաջնահերթություն:

Հուզական երանգները: Սերիալներում գերակշռում են բացասական երանգավորումն ու հոռետեսական դիրքորոշումները: Սերիալներում նման վատատեսական մթնոլորտն ավելի սրվում է բռնության, ագրեսիայի թե՛ խոսքային, թե՛ ֆիզիկական դրսևորումներով:

Ագրեսիայի դրսևորումները սերիալներում: Հեռուստաբովանդակության ուսումնասիրությունների շարքում մեծ թիվ են կազմում հեռուստատեսությամբ մատուցվող ագրեսիայի բացասական հետևանքների մասին հետազոտությունները: Հեռուստասերիալներում ագրեսիայի ուսումնասիրությունն իրականացվել է Ա.Բասի (1961թ.) սահմանման շրջանակում, ըստ որի՝ ագրեսիա է ցանկացած վարքային ձև, որը պարունակում է ուրիշին վնասելը կամ դրա սպառնալիքը: Բասն առանձնացնում է ագրեսիայի երկու տիպ (ֆիզիկական և խոսքային), որոնցից յուրաքանչյուրը բաժանվում է ակտիվ – պասիվ և ուղղակի – անուղղակի ենթատիպերի: Դրանց մեկնաբանությունները տրված են *Աղյուսակ 3*-ում.

Աղյուսակ 3.

Ագրեսիայի տիպերն ըստ Ա.Բասի

Ագրեսիայի տիպերը		***Օրինակներ***	
ֆիզիկական	*ակտիվ*	ուղղակի	Ապտակել, խփել, հրել, ծեծել, դանակահարել
		անուղղակի	Դավադրություն, փոս փորել՝ ուղղակի իմաստով
	պասիվ	ուղղակի	Գրգռվածություն, կոպտություն՝ հայհոյանք, վիրավորանք, սպառնալիք
		անուղղակի	Չար կատակ, ծաղր, բամբասանք, վատաբանում, գրպարտություն
խոսքային	*ակտիվ*	ուղղակի	Դիմադրություն, արգելել որևէ գործողություն, նստացույց
		անուղղակի	Ընդդիմադիր վարք, անհրաժեշտ գործողության չկատարում՝ հրաժարվել տարածքն ազատելուց
	պասիվ	ուղղակի	Չխոսել, արհամարհել, հարցերին չպատասխանել
		անուղղակի	Անհամաձայնություն, հրաժարում անհրաժեշտ բացատրություններ տալուց

Նշված սահմանման կիրառմամբ ուսումնասիրվել են սերիալների յուրաքանչյուր տեսարանում ագրեսիայի առկայությունն ու բնույթը:

Ագրեսիայի առկայությունը. Ամենառեյթինգային հեռուստաընկերությունների փրայմ թայմում հեռարձակվող սերիալների ժամանակի մեկ քառորդից ավելի (27.7%) ժամանակահատվածում առկա է ագրեսիա: Գերակշռում է խոսքային ագրեսիան, որը կազմում է ընդհանուր ագրեսիայի 90%-ը[5]: Իսկ ֆիզիկական ագրեսիա է պարունակվել ընդհանուր ագրեսիայի 24.9% ժամանակում[6]:

Ագրեսիայի ամենամեծ ժամանակային ծավալը «Արմենիա» հեռուստաընկերությամբ հեռարձակվող «Նռան հատիկ» սերիալում է՝ ընդհանուր ժամանակի մոտ 40%-ը: Իսկ ամենափոքր ծավալը՝ «Հ1»-ի «Բացիր աչքերդ» սերիալում՝ 18% (տե՛ս *Աղյուսակ 4*):

Ակտիվ և պասիվ ագրեսիա: Սերիալներում առկա ագրեսիան կրում է համարյա բացառապես (99%[7]) ակտիվ բնույթ: Դրա արտահայտչաձևերն են՝ ապտակել, խփել, հրել, կոպտություն՝ հայհոյանք, վիրավորանք, սպառնալիք, չխոսել, արհամարհել, հարցերին չպատասխանել:

[5] Այս ցուցանիշում ընդգրկված է և՛ միայն խոսքային, և՛ խոսքային ու ֆիզակական ագրեսիա պարունակող ժամանակը:

[6] Այս ցուցանիշում ընդգրկված է և՛ միայն ֆիզիկական, և՛ խոսքային ու ֆիզիկական ագրեսիա պարունակող ժամանակը:

[7] Ստացվում է որպես ակտիվ ագրեսիայի ցուցանիշի հարաբերություն ընդհանուր ագրեսիայի ցուցանիշին՝ 27.6/(27.6+0.2) = 0.993:

Աղյուսակ 4.

Խոսքային և ֆիզիկական ագրեսիան սերիալներում

Ագրեսիայի տիպը	«Բացիր աչքերդ» («Հ1»)		«Նռան հատիկ» («Արմենիա»)		«Օտարը» («Շանթ»)		Ընդամենը	
	N	Տնողություն	N	Տնողություն	N	Տնողություն	N	Տնողություն
Խոսքային	10	9.6%	43	33.4%	22	19.5%	75	20.8%
Ֆիզիկական	7	6.7%		0.0%	3	1.7%	10	2.7%
և՛ ֆիզիկական, և՛ խոսքային	1	1.6%	8	6.3%	5	4.5%	14	4.2%
Ընդամենը՝ առկա է	18	18.0%	51	39.7%	30	25.8%	99	27.7%
Առկա չէ	212	82.0%	242	60.3%	76	74.2%	530	72.3%
Ընդամենը	230	100.0%	293	100.0%	106	100.0%	629	100.0%

Ուղղակի և անուղղակի ագրեսիա: Ագրեսիան նույնպես սերիալներում կրում է համարյա բացառապես ուղղակի բնույթ՝ դավադրություն, ընդդիմադիր վարք, անհամաձայնություն և կազմում է ընդհանուր ագրեսիայի մոտ 99%-ը:

Սերիալներում ագրեսիայի բացառապես ակտիվ և ուղղակի բնույթն անուղղակիորեն արտահայտում է նաև սերիալների սյուժեների պարզունակությունը:

Աղյուսակ 5.

Ակտիվ և պասիվ ագրեսիայի առկայությունը սերիալներում

Ագրեսիայի տիպը	«Բացիր աչքերդ» («Հ1»)		«Նռան հատիկ» («Արմենիա»)		«Օտարը» («Շանթ»)		Ընդամենը	
	N	Տնողություն	N	Տնողություն	N	Տնողություն	N	Տնողություն
Ակտիվ	17	17.8%	51	39.7%	29	25.4%	97	27.6%
Պասիվ	1	0.2%	-	0.0%	1	0.4%	2	0.2%
Առկա չէ	212	82.0%	242	60.3%	76	74.2%	530	72.3%
Ընդամենը	230	100.0%	293	100.0%	106	100.0%	629	100.0%

Հատկանշական է ներկայացված ցուցանիշների համադրումը «Նռան հատիկ» սերիալի սցենարիստի հարցազրույցներից մեկի հետ. *«Մարդիկ շատ են խարազանում, երբ հեռուստասերիալներում տեսնում են սպանություն, վեճ կամ յուրաքանչյուր վատ տեսարան, բայց չէ՞ որ բարին մատնանշելու համար պետք է ցույց տալ կյանքի հակառակ կող-*

մը՝ չարը, վատը, անկարելին ու դրանով սովորեցնել, թե ինչն է վատ ու ինչից պետք է հեռու մնալ[8]»: Սցենարիստի խոսքից բխում է, որ նա սերիալը դիտարկում է ոչ միայն որպես ժամանցային բնույթի հաղորդում, այլև դրանում տեսնում է մարդկանց կրթելու, դաստիարակելու ֆունկցիա: Մինչդեռ, դժվար է պատկերացնել, որ կոնկրետ այս սերիալում ագրեսիվության դիտարկված մեծ ցուցանիշը և ագրեսիվ վարքի առատությունը ծառայում են ռեժիսորի նշած դաստիարակչական նպատակներին: Այն կարող է ունենալ նաև հակառակ էֆեկտը:

Աղյուսակ 6.

Ուղղակի և անուղղակի ագրեսիան սերիալներում

Ագրեսիայի տիպը	«Բացիր աչքերդ» («Հ1»)		«Նռան հատիկ» («Արմենիա»)		«Օտարը» («Շանթ»)		Ընդամենը	
	N	Տևողություն	N	Տևողություն	N	Տևողություն	N	Տևողություն
Ակտիվ	16	16.6%	51	39.7%	30	25.8%	97	27.3%
Պասիվ	2	1.3%	-	0.0%	-	0.0%	2	0.4%
Առկա չէ	212	82.0%	242	60.3%	76	74.2%	530	72.3%
Ընդամենը	230	100.0%	293	100.0%	106	100.0%	629	100.0%

Այդ են վկայում դեռևս 20-րդ դարի սկզբից կատարված բազմաթիվ հետազոտությունները[9], որոնք ապացուցում են, որ **բռնության տեսարանները լսարանում բարձրացնում են ագրեսիվությունը**: Ագրեսիվ վարքի կրկնօրինակումը կարող է պայմանավորված լինել որոշ հանգամանքներով, օրինակ՝ *ագրեսիվ հերոսի հետ նույնականացումը, ագրեսիվ ֆիլմում առկա են այնպիսի պայմաններ, որոնք համընկնում են հեռուստադիտողի իրական կյանքի փորձին* կամ գուցե *հեռուստահերոսի մեջ առկա են ազատարարի կամ փրկարարի որոշ դրսևորումներ[10]:* Սերիալներում ագրեսիայի տեսարանների շարունակական ցուցադրումը հեռուստալսարանին «ընտելացնում» է դրան՝ ագրեսիան վերածելով նորմատիվային վարքի:

Առավել քիչ ագրեսիվ տեսարաններ ունեցող «Բացիր աչքերդ» հեռուստասերիալի պրոդյուսերն իր հարցազրույցներից մեկում նշում է, որ

[8] «Դիանա Գրիգորյանը՝ նոր հեռուստասերիալի մասին», https://life.panorama.am/hy/news/2017/09/07/diana/649461

[9] *Лацис А.Э.,* Дети и кино [Текст] / А.Лацис, Л.Кейлина; Под ред. Е.Угаровой; Предисл. Пистрак; Главсоцвос. Наркомпрос; Обложка: С. В. [Москва] (1928).

[10] Այս մասին խոսվում է նաև *Վ.Միրաքյանի* «Ագրեսիվ սոցիալական դիրքորոշումների ձևավորումը լրատվամիջոցներով» հոդվածում:
Տե ս http://www.noravank.am/img/detail.php?ELEMENT_ID=6099

իրենց *գլխավոր նպատակն ու հաղորդագրությունն է, որպեսզի առավել ուշադիր ու սրտացավ լինենք մեր կողքին ապրող մարդկանց հանդեպ*[11]: Այս սերիալը ցուցադրվել է հանրային հեռուստաընկերության եթերում, դրականորեն տարբերվում է թե՛ լեզվական ոճով և թե՛ արժեքների, թեմաների մատուցման ձևով:

Ընդհանուր առմամբ, հայկական արտադրության սերիալները միատիպ են, կրկնվող և կանխատեսելի սցենարով, հաճախ սյուժեն կառուցված է հերոսի անձնական ողբերգության շուրջը: Սերիալներն առավելապես ազդում են հանրության հուզական ոլորտի վրա՝ բաց թողնելով գիտակցականը: Շրջանառվում են ավելի շատ բառեր, քան գաղափարներ, այդ պատճառով առանձնացված թեմաներում չի արտահայտվում որևէ գաղափարական հիմք: Դրանք չեն արտացոլում տվյալ երևույթի կամ արժեքի խորությունն ու իմաստը: Այսօր Հայաստանում, մեծ հաշվով, գերիշխող են մնում միատիպ՝ *«ընթացքում ձևավորվող», անհետևողական սցենարով «դժբախտ» սերիալները*[12]: Շարունակական պրոբլեմատիկ սոցիալական՝ ներընտանեկան ու միջանձնային հարաբերությունների վնասակար մոդելների, արժեքների աղավաղված ներկայացումը, բացասական տրամադրությունների ցուցադրումը չեն կարող անհետևանք մնալ, դրանք կարող են հանգեցնել սոցիալական ապատիայի: Այս տեսանկյունից չի կարելի թերագնահատել սերիալների ազդեցությունը հասարակության վրա:

Այնուամենայնիվ, հասարակության վրա հայկական հեռուստատեսությամբ ցուցադրվող սերիալների ազդեցության մասին լիարժեք պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է լայնածավալ հետազոտություն հեռուստասերիալներ դիտող հանրության շրջանում:

Պետք է ընդունել, որ հաշվի առնելով սերիալների մասսայականությունը բոլոր հատկանիշներով (ռեժիսորական, օպերատորական, սյուժետային և դերասանական)՝ հայկական հեռուստաեթերում անհրաժեշտ են որակյալ հայկական սերիալներ: Ակնհայտ է, որ հեռուստասերիալը կարող է լինել և՛ հետաքրքիր, և՛ միաժամանակ լինել բարձր մշակութային՝ հեռուստադիտողի դաստիարակության առումով:

[11] «Բացիր աչքերդ» հեռուստասերիալը մեր կողքին ապրող մարդկանց ճակատագրերի մասին է. Պրոդյուսեր, https://life.panorama.am/hy/news/2017/12/20/bacir-achqerd/684843

[12] *Ս.Մանուսյան, Դ.Գալստյան*, «Հեռուստասերիալները՝ որպես բովանդակություն և ծավալ», http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=6880

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 2008-2018ԹԹ.

Կարեն Վերանյան[*]

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2012թ. զեկույցի վիճակագրական տվյալներով[1]՝ առանձնացված 91 երկրների շարքում գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-*НИОКР*) ծախսերով Հայաստանը զբաղեցրել է 64-րդ դիրքը (ՀՆԱ ընդամենը 0,27%-ը)։ Զեկույցում Ադրբեջանը զբաղեցրել է 66-րդ հորիզոնականը, որի ԳՀՓԿԱ ծախսերը կազմել են երկրի ՀՆԱ 0,25%-ը։ Սակայն այստեղ մտահոգիչ է ոչ միայն այն, որ Հայաստանում ոլորտին հատկացվող ծախսերն այդպես էլ չեն գերազանցում ՀՆԱ նույնիսկ 1%-ը, այլ այն, որ երկու երկրների ՀՆԱ ծավալներն իրապես անհամադրելի են։ 2010թ. Հայաստանի ՀՆԱ-ն կազմում էր շուրջ $9,3 մլրդ։ Այն դեպքում, երբ Ադրբեջանի ՀՆԱ-ն նույն տարում հաշվվում էր $53 մլրդ։ 2017թ. Հայաստանի ՀՆԱ-ն կազմել է $11,5 մլրդ[2], Ադրբեջանի դեպքում՝ $40,6, սակայն ԳՀՓԿԱ ծախսերը երկու երկրների պարագայում էլ գրեթե պահպանել են ՀՆԱ-ի նկատմամբ իրենց տոկոսային հարաբերակցության ծավալները։ Իսկ դա նշանակում է, որ թեև թե՛ Հայաստանում և թե՛ Ադրբեջանում ԳՀՓԿԱ ծախսերը ՀՆԱ-ում չեն արձանագրել դրական քանակական (տոկոսային) տեղաշարժ (այդպես էլ չհատելով 0,5% սահմանը), այդուհանդերձ, Ադրբեջանի դեպքում ոլորտին հատկացվող ծախսերն ապահովել են «մեխանիկական» աճի դինամիկա՝ ի հաշիվ ՀՆԱ ծավալների շեշտակի աճի[3]։ 2015թ. Հայաստանի պարագայում ԳՀՓԿԱ ծախսերը կազմել են ՀՆԱ 0,3%-ը, Ադրբեջանում՝ 0,2%-ը[4]։ Ավելին, 2017թ. կեսերին պարզ դարձավ, որ ՀՀ կառավարու-

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար։

[1] UNESCO Institute for Statistics, 2012, http://gtmarket.ru/ratings/research-and-development-expenditure/info։ Զեկույցի վիճակագրական տվյալները վերաբերում են 2010թ.։

[2] https://knoema.ru/search?query=Армения+Валовой+внутренний+продукт&pageIndex=&scope=&term=&correct=&source=Header

[3] https://knoema.ru /atlas/Азербайджан/ВВП

[4] https://knoema.ru /atlas/ranks/Затраты-на-НИОКР-percent-ВВП#

թյան 2018-2020թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով նվազեցվելու է ՀՆԱ-ից կրթության ոլորտին հատկացվող մասնաբաժինը. եթե 2017թ. այն կազմում էր 2.34%, 2018թ. նախատեսվում է 2.18%, 2019թ.՝ 1.99%, իսկ 2020թ.՝ ընդամենը 1.85%:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի (ՎԿ) տեղեկատվության, 2009թ. հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերն ընդհանուր առմամբ կազմել են շուրջ $21,9 մլն (2009թ. 1$=386 դրամ փոխարժեքով), 2010թ. որոշակի նվազում է արձանագրվել՝ շուրջ $20.6 մլն: Նշենք նաև, որ 2009թ. ներքին ծախսերից բյուջետային միջոցները կազմել են $13.1 մլն, իսկ 2010թ. ներքին ծախսերից՝ $14,4 մլն[5]: Ավելի հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ոլորտում իրականացված ծախսերը դիտարկել Հայաստանի ընդհանուր բյուջետային հաշվարկի հետ հարաբերակցության հարթությունում: Այսպես, 2009թ. դրությամբ, համաձայն ՀՀ ՎԿ տվյալների, Հայաստանի համախմբված բյուջեի եկամուտները կազմել են 711 մլրդ դրամ՝ $1.841 մլրդ: Ինչպես տեսնում ենք, երկրի ընդհանուր բյուջետային եկամուտների համեմատ հետազոտություններին և մշակումներին ուղղված ներքին ծախսերը բավական ցածր են: 2011թ., 2010թ. համեմատ, ոլորտում ներդրված ծախսերը զգալիորեն աճել են՝ կազմելով $24.2 մլն (1$=382,98 փոխարժեքով)[6]: 2011թ. գիտությանը հատկացված ներքին ծախսերից բյուջետային միջոցները կազմել են 6.066 մլն դրամ: Մյուս կողմից, Հայաստանում (նաև Ադրբեջանում) հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը կարելի է դիտարկել նաև երկրի ՀՆԱ-ի հետ հարաբերակցությամբ, ինչի վերաբերյալ որոշ տվյալներ վերն արդեն ներկայացվեցին:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինիս ցուցանիշները 2009-2013թթ. կտրվածքով ավելի քան 5 անգամ գերազանցել են Հայաստանի համապատասխան արդյունքները: Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի տվյալներով, 2009թ. հետազոտություններին և զարգացման աշխատանքներին հատկացված ֆինանսական միջոցներն ընդհանուր առմամբ կազմել են 89 մլն մանաթ՝ $111 մլն[7], երկրի ՀՆԱ 0,3%-ը: Եթե համե-

[5] 2010թ. օգոստոսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 366,71 դրամ:
[6] 2011թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 382,98 դրամ:
[7] 2013թ. դրությամբ՝ 1$=0.8 մանաթ:

մատենք 2009թ. Հայաստանի ցուցանիշի հետ, ապա վերջինս զիջում է հարևան երկրի համապատասխան արդյունքին մոտ 5 անգամ: 2010թ. հետազոտությունների և մշակումների վրա ծախսված ֆինանսական միջոցները գնահատվել են $115 մլն՝ ՀՆԱ 0,2%-ը[8], իսկ 2012թ.՝ $146,6 մլն:

Ադրբեջանի պետական վիճակագրական կոմիտեի կայքը տվյալներ է ներկայացնում նաև հետազոտությունների և գիտական աշխատանքների ծախսերի վերաբերյալ՝ ըստ սեկտորների: Նշենք, որ ոլորտին հատկացվող ֆինանսների զգալի հատվածն ուղղվում է պետական սեկտորին: 2010թ. հետազոտություններին ուղղված $115 մլն-ից պետական սեկտորին հատկացվել է շուրջ $85 մլն, իսկ 2011թ. $137,5 մլն-ից՝ $100 մլն:

Աղյուսակ 1.
Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը, 2009-2016թթ., $մլն

Երկիրը	2009	2010	2011	2012[9]	2013	2014	2015	2016
Հայաստան	21,9	20.6	24.2	24	23 (406[10])	26.3 (415)	25.1 (475)	23 (480)
Ադրբեջան	111	115	137,5	146,6	152,5 (0,8[11])	115 (1,1)	109 (1,1)	83,1 (1,5)

Աղբյուրը՝ http://www.armstat.am/am/, www.stat.gov.az/indexen.php

2013-2016թթ. հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի ցուցիչով Հայաստանն ընդհանուր առմամբ պահպանել է նախորդ տարիների արդյունքները: Հայաստանի ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են 2014թ.՝ $26,3 մլն և 2015թ.՝ $25,1 մլն: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2013-2016թթ. Ադրբեջանը հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի ցուցիչով արձանագրել է ցուցանիշների կայուն նվազման միտում: Դա, թերևս, պայմանավորված է ադրբեջանական մանաթի փոխարժեքի անկմամբ ամերիկյան դոլարի նկատմամբ: Այսպես, եթե 2013թ. Ադրբեջանի հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը կազմել են $152,5 մլն, ապա 2015թ. այդ ցուցանիշը $109 մլն էր, 2016թ.՝ $83,1մլն:

Անդրադառնանք 2008-2017թթ. Հայաստանում և Ադրբեջանում հե-

[8] The State Statistical Committee of the Republic of Azerbaijan, http://www.stat.gov.az/
[9] 2012թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 403,2 դրամ:
[10] Հայկական դրամ-ԱՄՆ դոլար փոխարժեքը:
[11] Ադրբեջանական մանաթ-ԱՄՆ դոլար փոխարժեքը:

տազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների և դրանցում ներգրավված անձնակազմի թվաքանակների համեմատականներին: 2008-2013թթ. Հայաստանում գործող նման կազմակերպությունների թվաքանակը կայուն նվազման միտում է արձանագրել: Եթե 2008թ. Հայաստանում գործում էր 83 գիտահետազոտական կազմակերպություն, ապա 2012թ. դրանց թվաքանակը կազմել է 72, 2013թ.՝ 62: Իսկ 2014-2016թթ. նման կազմակերպությունների քանակն աճման դինամիկա է ապահովել. 2014թ.՝ 66, 2015թ.՝ 70 կազմակերպություն: Վերջին տասնամյակում Հայաստանի համապատասխան ցուցանիշները լավագույն արդյունքներն ապահովել են 2008-2009թթ.:

Աղյուսակ 2.

Հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների քանակը

Երկիրը	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Հայաստան	83	83	81	72	72	62	66	70	69	-
Ադրբեջան	146	148	145	143	140	140	140	145	141	135

Աղբյուրը՝ http://www.armstat.am/am/, www.stat.gov.az/indexen.php

Ադրբեջանում հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունները, որոնք, որպես կանոն, թվաքանակով ավելին են, քան Հայաստանում, նույնպես նվազել են նշյալ ժամանակահատվածում: Եթե 2008թ. կար 146 կազմակերպություն, 2012 թվականին՝ 140, ապա 2017թ.՝ 135: 2008-2017թթ. Ադբեջանում գործող նման կազմակերպությունների քանակական ամենաբարձր ցուցանիշները, ինչպես Հայաստանի պարագայում, գրանցվել են 2008-2009թթ.:

Աղյուսակ 3.

Հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպություններն ըստ գործունեության տեսակի, 2000-2012թթ.

Երկիրը	2000	2005	2009	2010	2011	2012
Ադրբեջան	137	146	148	145	143	140
որից՝						
գիտահետազոտական	95	97	95	93	92	90
նախագծային	12	6	5	5	5	3
բուհական	25	33	39	37	36	37
այլ	5	10	9	10	10	10

Աղբյուրը՝ www.stat.gov.az/indexen.php

Պետք է նշել, որ Ադրբեջանում հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների մեծ մասը գիտահետազոտական կազմակեպություններ են, գործում են նաև նախագծային և բուհական ինստիտուտներ ու կենտրոններ: 2012թ. այդ երկրում հաշվառված 140 հետազոտական կազմակերպություններից 90-ը իրականացրել է գիտահետազոտական գործունեություն, 3-ը՝ նախագծային, 37-ը՝ բուհական, 10-ը՝ այլ ուղղվածության: ՀՀ ՎԿ կայքում նման տեղեկատվություն չենք հանդիպել:

Ադրբեջանի վիճակագրական ծառայությունը տվյալներ է ներկայացնում նաև այդ կազմակերպությունների գործունեության վերաբերյալ՝ ըստ սեկտորների: Պարզվում է, որ դրանց զգալի մասը գործում է պետական սեկտորում, նրանց հաջորդում են բուհական համակարգում, մնացյալը՝ գործարար շրջանակներում ներգրավված կազմակերպությունները: 2012թ. երկրում գրանցված 140 հետազոտական կազմակերպություններից 90-ը ներգրավված է եղել պետական սեկտորում, 11-ը՝ գործարարության, իսկ 39-ը՝ բուհական համակարգում:

Ադրբեջանի Ազգային վիճակագրական ծառայության կայքում տեղեկատվություն կա նաև հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների քանակի վերաբերյալ՝ ըստ դրանց աշխարհագրական տեղակայման: 2005թ. երկրում գործող 146 կազմակերպությունների զգալի մասը (118) գործել է Բաքվում, Գանձակ-Ղազախի շրջանում՝ 9, 6-ական կենտրոն՝ Ափշերոնի շրջանում և Նախիջևանում (մնացյալը՝ այլ շրջաններում): 2012թ. պատկերը հետևյալն էր. երկրում գործող 140 կազմակերպությունից 105-ը՝ Բաքվում, Ափշերոնում՝ 6-ի փոխարեն 11, Գանձակ-Ղազախի շրջանում թիվը պահպանվել է՝ 9, թիվը պահպանվել է նաև Նախիջևանում՝ 6:

Աղյուսակ 4.
Հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպություններն ըստ սեկտորների, 2000-2012թթ.

Երկիրը	2000	2005	2009	2010	2011	2012
Ադրբեջան	137	146	148	145	143	140
որից՝						
պետական սեկտոր	90	93	92	93	92	90
գործարարություն	19	17	14	13	13	11
բուհական	28	36	42	39	38	39

Աղբյուրը՝ www.stat.gov.az/indexen.php

Այժմ անդրադառնանք գիտահետազոտական կազմակերպություններում ներգրավված անձնակազմի քանակական համադրությանը: 2008-2016թթ. Հայաստանում հետազոտություններ և մշակումներ իրականացնող կազմակերպությունների անձնակազմի թվաքանակում, բացառությամբ 2009թ. և 2014թ., նվազման միտում է արձանագրվել: 2009թ. նման կազմակերպությունների աշխատողների թվաքանակը կազմել է 6926, 2010թ.՝ 6558, 2012թ.՝ 5598 գիտաշխատող: 2008-2016թթ. Հայաստանում նշյալ անձնակազմի թվաքանակում ամենաբարձր արդյունքը գրանցվել է 2009թ.՝ 6926, իսկ ամենացածր ցուցանիշը՝ 2016թ. (4881 աշխատակից):

2008-2017թթ. Ադրբեջանի գիտահետազոտական անձնակազմի թվաքանակն աչքի է ընկել տատանումներով: Եթե 2008թ. այդ թիվը 17942 էր, ապա 2009թ.՝ 17401, իսկ 2010թ.՝ 17924: 2012-ից նշյալ անձնակազմի թվաքանակը կտրուկ աճման դինամիկա արձանագրեց՝ 21573 գիտաշխատող:

Հարկ է նշել, որ 2008-2016թթ. գիտահետազոտական անձնակազմի թվաքանակի ցուցանիշով Ադրբեջանը, որպես կանոն, մի քանի անգամ գերազանցել է Հայաստանի համապատասխան արդյունքները: Եթե 2008-2010թթ. այդ գերազանցությունը միջինը 2,5 անգամ էր, ապա հաջորդ տարիներին՝ 3-4,5 անգամ: Այս ցուցիչում, թերևս, պետք է հաշվի առնել նաև երկու երկրների բնակչության թվաքանակների տարբերությունը:

Աղյուսակ 5.

Գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող անձանց քանակը, հազ. մարդ

Երկիրը	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
Հայաստան	6899	6926	6558	5718	5598	5230	5627	5044	4881	-
Ադրբեջան	17942	17401	17924	18687	21573	22046	22358	23329	23093	22527

Աղբյուրը՝ http://www.armstat.am/am/, www.stat.gov.az/indexen.php

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ 2009-2012թթ. Հայաստանում իրականացվող գիտատեխնիկական աշխատանքների տարեկան ծավալները, ինչպես և նախորդ տարիներին, զիջում են Ադրբեջանի համապատասխան ցուցանիշներին: Սակայն այն տարբերությամբ, որ եթե 2003-2007թթ. այդ ցուցանիշները հնարավորինս մոտ էին միմյանց, ապա 2009-2012թթ. Ադրբեջանում իրականացվող գիտատեխնիկական աշխատանքների տարեկան ծավալներն անհամեմատ գերազանցում են մեր երկրի ցուցանիշները: 2011թ. Հայաստանում այդ ցուցանիշը կազմել է $24,1 մլն,

Ադրբեջանում՝ $142,9 մլն, 2012թ. Հայաստանում այն կազմում էր $25,4 մլն, Ադրբեջանում՝ մոտավոր հաշվարկով $160 մլն: Ադրբեջանի վիճակագրական ծառայության 2017թ. տարեգրքում 2013-2016թթ. գիտատեխնիկական աշխատանքների ծավալների վերաբերյալ մեզ չի հաջողվել տեղեկատվություն գտնել:

Աղյուսակ 6.
Գիտատեխնիկական աշխատանքների ծավալը, $-ային հաշվարկով

Երկիրը	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստան[12]	≈$24,6մլն	≈$22,7մլն	≈$24,1մլն	≈$25,4մլն	25,2	27,7	26,5	25
Ադրբեջան[13]	≈$109մլն	≈$123,3մլն	≈$142,9մլն	≈$160մլն	-	-	-	-

Աղբյուրը՝ http://www.armstat.am/am/, www.stat.gov.az/indexen.php

Ամփոփում

Գտնվելով փաստացի պատերազմական իրադրությունում, չտիրապետելով նավթագազային և խոշոր եկամտաբեր այլ բնական պաշարների՝ Հայաստանի տեսանկյունից հայ-ադրբեջանական դիմակայությունում ուժային հավասարակշռությունը պահպանելու, իսկ հնարավորության դեպքում՝ նաև որակական առավելություն ունենալու առումով, որպես անկյունաքարային նախադրյալ, առաջին պլան է մղվում Հայաստանի բնակչության և ոչ հայրենաբնակ հայության մտավոր-մարդկային ռեսուրսները Հայաստանում ներգրավելու և կուտակելու գերխնդիրը: Հարցն ակտուալանում է Հայաստանում արտագաղթի և այսպես կոչված «ուղեղների արտահոսք»-ից բխող՝ ազգային ու պետական անվտանգությանը նետված մարտահրավերների պայմաններում: Սակայն հարկ ենք համարում միևնույն ժամանակ նշել, որ մարդկային-մտավոր պոտենցիալի անհրաժեշտ որակական-քանակական բազայի ապահովումն ինքնին դեռևս չի կարող լինել այն բանի երաշխիքը, որ Հայաստանը կունենա կայուն և երկրաչափական պրոգրեսիայով աճող դինամիկ տնտեսություն: Այդ հարցում առանձնակի կարևորություն է ներկայացնում անհրաժեշտ մտավոր, գիտատեխնոլոգիական ռեսուրսների և կարողությունների արդյունավետ կառավարման հարցը:

[12] Հայկական դրամը դոլարի վերածելու համար ընտրվել է օպտիմալ փոխարժեք՝ 2011թ. դեկտեմբերին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 382,98 դրամ:
[13] Ադրբեջանական մանաթը դոլարի վերածելու համար ընտրվել է օպտիմալ փոխարժեք՝ 2013թ. դրությամբ՝ 1$=0.8 մանաթ:

«ՂՐԻՄԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ» ՆԵՐԿԱ ՓՈՒԼՈՒՄ

Անդրանիկ Հովհաննիսյան[*]

Արդի աշխարհում էթնիկ հակամարտություններն անխուսափելիորեն ձևափոխվում են էթնոքաղաքական հակամարտությունների, քանի որ դրա մեջ ներգրավվում են սեփական քաղաքական շահերը հետապնդող տարբեր ուժեր: Դա էլ իր հերթին էթնոքաղաքական կոնֆլիկտները բերում է միջազգային հարաբերությունների ոլորտ և դարձնում միջազգային հարաբերությունների ուսումնասիրության առարկա: Տարածված տեսակետ կա, թե էթնոսների միջև մշակութային, լեզվական, կրոնական և պատմականորեն ձևավորված այլ տարբերություններն ինքնին հակամարտությունների առաջացման պատճառներ չեն: Սակայն նշված էթնոմշակութային տարբերությունները կարող են առիթ հանդիսանալ հակամարտությունների զարգացման համար: Այսինքն՝ «ազգայինի» մասնաբաժինը էթնոքաղաքական հակամարտությունների մեջ աննշան է (դրանք պատճառ չեն, այլ միայն առիթ), որոնցում որոշիչ նշանակություն ունեն քաղաքական գործոնները: Երկբևեռ քաղաքական աշխարհի կործանումը յուրատեսակ խթան հանդիսացավ բազմաթիվ լատենտ և «սառեցված» հակամարտությունների ակտիվացման համար: Միայն 1988-1991թթ. ժամանակահատվածում նախկին խորհրդային հանրապետություններում ազգային հողի վրա տեղի է ունեցել ավելի քան 150 բախում, որոնցից 20-ն ուղեկցվել է մարդկային կորուստներով:

Ղրիմն իր պատմության ամբողջ ընթացքում բազմիցս ենթարկվել է տարբեր զավթիչների արշավանքների՝ սկյութներ, սարմատներ, գոթեր, հոներ, հույներ, հռոմեացիներ, մոնղոլ-թաթարներ և այլն: Այս հանգամանքն, իհարկե, արտացոլվել է երկրամասի բնակչության ազգային կազմի վրա: Ավելին, XV դարում թուրք-օսմանները, զավթելով Ղրիմը, թուրքացման են ենթարկել թերակղզու գրեթե ամբողջ բնակչությունը: 1768-1774թթ. ռուս-օսմանյան պատերազմից հետո, համաձայն Քյուչուկ-Քայնարջիի խաղաղ պայմանագրի, վերջ դրվեց օսմանյան տիրապետությանը Ղրիմում, իսկ 1783թ. Եկատերինա 2-րդը մանիֆեստ հրապարակեց Ղրիմը Ռուսական կայս-

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

ության կազմում ընդգրկելու մասին: Պետք է նշել, որ XIX դարի վերջին Ղրիմի էթնիկ կազմը բազմազան էր (տե՛ս *Աղյուսակ 1*):

Աղյուսակ 1.

Ղրիմի բնակչության ազգային կազմը XIX դարի վերջին[1]

Էթնիկ խումբ	*Բնակչության թիվ*	*%*
Ղրիմի թաթարներ	194 294	35,5%
Վելիկոռուսներ	180 963	33,1%
Մալոռուսներ	64 703	11,8%
Գերմանացիներ	31 590	5,8%
Հրեաներ	24 168	4,4%
Հույներ	17 114	3,1%
Հայեր	8 317	1,5%

1917թ. հեղափոխությունների և դրանց հաջորդած տարիներին Ղրիմի մահմեդական բնակչությունը (Ղրիմի թաթարները), օգտվելով հեղափոխական ու քաղաքացիական պատերազմի խառնաշփոթից, իշխանությունը զավթելու փորձեր էր կատարում թերակղզում: 1919թ. ձևավորվեց Ղրիմի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը ՌԽՖՍՀ (Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն) կազմում: 1954թ., հիմք ընդունելով «Հաշվի առնելով տնտեսության ընդհանրությունը, տարածքային մոտիկությունը, սերտ մշակութային կապերը Ղրիմի մարզի և Ուկրաինական ԽՍՀ-ի միջև» ձևակերպումը, խորհրդային ղեկավարությունը որոշում կայացրեց Ղրիմը Ուկրաինական ԽՍՀ-ին փոխանցելու մասին[2]:

1991թ. հանրաքվեն[3] հարցականի տակ դրեց Ղրիմը Ուկրաինական ԽՍՀ-ին փոխանցելու և Ղրիմի Ինքնավար Հանրապետությունը լուծարելու մասին (1945թ.) որոշումները: Ընդառաջ գնալով Ղրիմի բնակչության կամարտահայտմանը՝ Ուկրաինայի Գերագույն ռադան մեկ ամիս անց օրենք ընդունեց «Ղրիմի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության վերականգնման մասին»: Նույն թվականի օգոստոսի 24-ին Ուկրաինան անկախություն հռչակեց, որին մի քանի օր անց (սեպտեմբերի

[1] 1897-ին Ռուսական կայսրության առաջին ընդհանուր մարդահամարը, http://www.demoscope.ru/weekly/ssp/rus_lan_97_uezd.php?reg=1420, 25.06.2018.

[2] ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը (19 փետրվարի 1954թ.) «Ղրիմի մարզը Ռուսաստանի ԽՖՍՀ կազմից դուրս բերելու և Ուկրաինական ԽՍՀ կազմում ընդգրկելու մասին»:

[3] 1991թ. հունվարի 20-ին Ուկրաինական ԽՍՀ Ղրիմի մարզում անցկացվեց հանրաքվե «Ղրիմի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության վերականգնման մասին հարցով», որի ժամանակ կողմ քվեարկեց թերակղզու բնակչության ավելի քան 90%-ը:

սկզբին) միացավ նաև Ղրիմը[4]: 1991թ. դեկտեմբերին կայացավ անկախության Համաուկրաինական հանրաքվեն (տե՛ս *Քարտեզ 1*), որն, ըստ մասնագետների, կայացավ ԽՍՀՄ համապատասխան օրենքի կոպիտ խախտմամբ[5], համաձայն որի՝ ԽՍՀՄ կազմում մնալու կամ նրանից դուրս գալու մասին որոշումը Ղրիմը պետք է կայացներ առանձին մարզային հանրաքվեի միջոցով: Այնուամենայնիվ, ըստ համաուկրաինական անկախության հանրաքվեի արդյունքների ակնհայտ երևում է, որ 1954-ից Ուկրաինական ԽՍՀ կազմում գտնվող Ղրիմի Ինքնավար Հանրապետության (42) բնակչության զգալի մասը անկախության հռչակմանը դեմ է քվեարկել:

Հավանաբար նկատի ունենալով նաև այս հանգամանքը՝ 1992թ. մայիսին Ղրիմի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհուրդն ընդունեց «Ղրիմի Հանրապետության ինքնուրույն պետականության» հռչակագիրը, որը, սակայն, անմիջապես չեղյալ հայտարարվեց Ուկրաինայի ճնշման տակ: Հետագայում Ղրիմի անկախ պետականության գործընթացների բովանդակությունը բացառապես պայմանավորված էր Ուկրաինայի նախագահի անձով ու նրա արտաքին կողմնորոշումներով: Այսինքն՝ Ուկրաինայի նախագահի ռուսամետ դիրքորոշման պարագայում Ղրիմում տիրում էր հանդարտ և փոխհամաձայնեցված իրավիճակ, իսկ արևմտամետ դրսևորումների դեպքում թերակղզում անմիջապես ակտիվանում էին անջատողական և ինքնուրույն պետականության կերտման տրամադրությունները: Այսինքն՝ Ղրիմի կարգավիճակի հետ կապված հակամարտության լատենտ փուլը հիմնականում աչքի էր ընկնում հակասությունների հանդարտ և դիրքային դրսևորումներով:

2013թ. նոյեմբերի վերջին, երբ Ուկրաինայի կենտրոնական իշխանությունը կասեցրեց Եվրոպական միության հետ ասոցացման համաձայնագրի ստորագրման գործընթացը[6], եվրոպամետ ուժերը Կիևի կենտրոնում զանգվածային ցույցեր սկսեցին, որոնք, մի քանի ամիս ուղեկցվելով բռնություններով, սպանություններով և այլ օրինախախտումներով, ի վերջո հանգեցրին իշխանության և ընդդիմության միջև «Ուկրաինայում

[4] 1991թ. սեպտեմբերի 4-ին Ղրիմի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակագիր ընդունեց, որում մասնավորապես ասվում էր «Ուկրաինայի կազմում իրավական ժողովրդավարական պետություն ստեղծելու մասին»:

[5] Հարցը վերաբերում է «ԽՍՀՄ կազմից խորհրդային հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգը» ԽՍՀՄ օրենքի 3-րդ հոդվածին:

[6] Ուկրաինայի և Եվրոպական միության միջև ասոցացման համաձայնագրի ստորագրումը նախատեսված էր «Արևելյան գործընկերության» շրջանակներում հերթական հանդիպման ժամանակ, որը պետք է տեղի ունենար 2013թ. նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում:

քաղաքական ճգնաժամի կարգավորման մասին» համաձայնագրի ստորագրմանը՝ Գերմանիայի, Լեհաստանի, Ֆրանսիայի և Ռուսաստանի արտաքին գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Սակայն, հիմնվելով ստորագրված փաստաթղթում նախատեսված քաղաքական բարեփոխումների դանդաղության և աստիճանականության վրա, ընդդիմությունը պահանջեց երկրի նախագահի անհապաղ հրաժարականը և սպառնաց կրկին ակտիվ գործողությունների անցնելու պատրաստությամբ: Ձեռք բերված համաձայնության խախտումը և կյանքի անվտանգության երաշխիքների բացակայությունը ստիպեցին երկրի նախագահ Վ.Յանուկովիչին առանց հրաժարական տալու լքել Կիևը:

Քարտեզ 1.

Անկախության հռչակման Համաուկրաինական հանրաքվե՝ «ո՛չ, չեմ հաստատում» պատասխանների տոկոսը[7]



Ուկրաինայի մայրաքաղաքում և արևմտյան որոշ տարածքներում սկսված հեղաշրջումը հակադարձ ալիք բարձրացրեց երկրի արևելյան և հարավային շրջաններում, այդ թվում՝ Ղրիմում, որի բնակչության էթնոկրոնական կազմի մեջ 1940-ական թթ. ի վեր զգալի ժողովրդագրական փոփոխություններ են տեղի ունեցել (տե՛ս *Աղյուսակ 2*): Մարտի 6-ին Ղրիմի Գերագույն խորհուրդը որոշում կայացրեց Ռուսաստանի Դաշնության կազմում ընդգրկվելու մասին և այդ հարցի վերջնական որոշման

[7] 1991թ. անկախության Համաուկրաինական հանրաքվեի արդյունքները, https://www.archives.gov.ua/Sections/15r-V_Ref/index.php?11, 23.06.2018.

համար նշանակեց հանրաքվե: Իսկ մի քանի օր անց ընդունվեց «Հռչակագիր Ղրիմի Ինքնավար Հանրապետության և Սևաստոպոլ քաղաքի անկախության մասին»[8]: Հետագա իրադարձություններն ընթացան «կայծակնային» արագությամբ: Այսպես, անկախության հանրաքվեն տեղի ունեցավ մարտի 16-ին, Ղրիմի բնակչության 96,77%-ը կողմ արտահայտվեց ՌԴ կազմում ընդգրկվելու օգտին, և անմիջապես հաջորդ օրը՝ հիմնվելով հանրաքվեի արդյունքների վրա, Ղրիմի ղեկավարությունը դիմեց ՌԴ-ին իր կազմում ընդգրկելու խնդրանքով: Եվս մեկ օր անց Ռուսաստանի Դաշնության և Ղրիմի Հանրապետության միջև ստորագրվեց պայմանագիր «ՌԴ կազմում Ղրիմն ընդունելու մասին»:

Աղյուսակ 2.

Ղրիմի բնակչության ազգային կազմը 2014թ.[9]

Էթնիկ խումբ	*Բնակչության թիվ*	*%*
Ռուսներ	1 492 078	67,9%
Ուկրաինացիներ	344 515	15,1%
Ղրիմի թաթարներ	232 340	10,1%
Թաթարներ	44 996	1,97%
Բելառուսներ	21 694	0,95%
Հայեր	11 030	0,48%

Քննարկված էթնոքաղաքական հակամարտության առաջացման պատճառների վերլուծական համադրության տեսանկյունից պետք է նշել, որ «Ղրիմի հիմնահարցում» կան շատ ընդհանրություններ Արցախի հիմնախնդրի կարգավորման հարցի հետ, սակայն կան նաև բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք ամեն մի կոնկրետ հակամարտությանը հաղորդում են յուրատիպ բնույթ, ինչն, իր հերթին, մի կողմից, ենթադրում է որոշակի սկզբունքների և մոտեցումների ընդհանրություն, մյուս կողմից՝ բացառում է այդ հակամարտությունների կարգավորման ու լուծման բացարձակ ունիվերսալ մեխանիզմի կիրառման հնարավորությունը:

Նախ՝ նկատենք, որ նշված հետխորհրդային էթնոքաղաքական հակամարտությունները միավորում և ընդհանրացնում է արտաքին գործոնը՝ աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում: Այս առումով պետք է հիշել աշխարհաքաղաքականության հիմնական օրենքի՝ տալասոկրատիայի և տելուրոկրատիայի միջև ընթացող մշտական

[8] Անկախության հռչակագիրը Ղրիմի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի և Սևաստոպոլի քաղաքային խորհրդի կողմից ընդունվել է մարտի 11-ին:

[9] http://www.demoscope.ru/weekly/ssp/rus_lan_97_uezd.php?reg=1420

պատմական ու քաղաքակրթական հակամարտությունը, որի շրջանակներում Արևմուտքի գերխնդիրներից մեկը հանդիսանում է Ռուսաստանի դուրսբերումը համաշխարհային գործընթացներից և նրա մեկուսացումն իր սահմանների մեջ: Նշված ծրագրի իրականացման համար Արևմուտքի քաղաքական տեխնոլոգները տասնամյակներ շարունակ մշակել և մշակում են կարճաժամկետ, միջնաժամկետ և տևական մեխանիզմներ Ռուսաստանի սահմանների ամբողջ պարագծով հակառուսական թշնամական տրամադրությունների սերմանման և զարգացման համար: Այս առումով բավական ուշագրավ կերպով առանձնանում է Ղրիմի հիմնախնդիրը, որի լուծումը, ինչպես հայտնի է, տեղի ունեցավ առանց ակտիվ ռազմական գործողությունների (ըստ ամենայնի, դրանում կարևոր նշանակություն ուներ Սևաստոպոլի ռուսական ռազմաբազայի ներկայությունը), իսկ հակամարտության ռազմական ամբողջ ծանրությունն իր վրա վերցրեց Ուկրաինայի հարավարևելյան տարածքը (Նովոռոսիան՝ Դոնեցկի և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունները):

Չնայած այն հանգամանքին, որ ՄԱԿ անդամ երկրների մեծ մասը դեռ չի ճանաչում Ղրիմի միացումը Ռուսաստանին, պետք է նշել, որ այս միացումն արդեն պատմական փաստ է: Կարևոր է նաև նշել, որ այս հարցում Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը պետք է լինի հավասարակշռված և արտացոլի բացառապես երկու հայկական պետությունների ազգային ու պետական շահերը, այլ ոչ թե պայմանավորված լինի այս կամ այն գերտերության կամքով: Բացի այդ, թերակղզին պատմական և աշխարհաքաղաքական առումով կարևոր ռազմավարական նշանակություն է ունեցել հայության և հայկական պետության համար: Ավելին, հայերը Ղրիմում բնակություն են հաստատել դեռևս VI դարում, այսինքն՝ ավելի վաղ, քան թաթարները (թյուրքերը) կամ ռուսները: XIV դարում Ղրիմում մոտ 150 000 հայ է բնակվել, որոնք կազմում էին թերակղզու բնակչության 35%-ը, այդ թվում՝ Թեոդոսիայի բնակչության 2/3-ը: Համոզված ենք, որ դեռևս 1990-ական թթ. Արցախի հայության պայքարը հանուն անկախության և ազատության դարձավ նախադեպ Ղրիմի բնակչության համար, որոնց, ի տարբերություն հայերի, քանզի նրանց թիկունքում կանգնած էր հզոր գերտերություն, հաջողվեց այս պայքարը հասցնել տրամաբանական ավարտի՝ անարդարացիորեն երկու մասի բաժանված ազգը վերամիավորելով մեկ պետության շրջանակում:

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Վահրամ Հովյան[*]

2016թ. դեկտեմբերին Հալեպի ազատագրումից հետո սիրիահայության համար ավարտվեց ճգնաժամի ամենաթեժ փուլը, որից հետո այն աստիճանաբար պետք է անցներ պատերազմի վերքերն ապաքինելու երկարատև ու դժվարին գործին: Չնայած կրած հսկայական մարդկային և գույքային կորուստներին՝ համայնքը, այնուամենայնիվ, կարողացավ պահպանել իր գոյությունը: Դրա վկայություններն են.

1. Համայնքի մարդկային ռեսուրսների որոշակի պահպանումը: Սիրիական ճգնաժամի հետևանքով ամենամեծ կորուստը կրեց Հալեպի հայ համայնքը: Եթե մինչ ճգնաժամը այն հաշվվում էր մոտ 50 հազար, ապա քաղաքի ազատագրման պահին այնտեղ մնացած հայերի թիվը կազմում էր 8-10 հազար: Կորուստն, ինչ խոսք, ահռելի է: Այնուամենայնիվ, թեկուզ այդ թվաքանակով հայության ներկայությունը թույլ տվեց կանխել համայնքի իսպառ վերացումը: Բացի այդ, քաղաքի ազատագրումը և խաղաղ միջավայրի ամրապնդումը թույլ են տալիս հատկապես Սիրիայի այլ շրջաններ (օրինակ՝ Լաթաքիա) և Լիբանան տեղափոխված հալեպահայերին վերադառնալ իրենց ծննդավայր, ինչը և ներկայում աստիճանաբար տեղի է ունենում: Ավելի նվազ չափերով նման միտում կա նաև Հայաստան գաղթած հալեպահայերի շրջանում: Թե որքան է հիշյալ միտումների արդյունքում ավելացել հալեպահայության թվաքանակը և դեռ որքան ավելանալու ռեսուրս կա՝ դժվար է ասել: Փաստ է, որ չնայած ստացած մահացու վերքերին՝ Հալեպի հայ համայնքը, այնուամենայնիվ, կարողացավ գոյատևել:

Սիրիական ճգնաժամի հետևանքով տուժած մյուս համայնքը Քեսապն էր[1], որը 2014թ. մարտին, ենթարկվելով հարձակման, ամբողջու-

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

[1] Խոսքը Քեսապի գավառակի մասին է, որն ընդգրկում է Քեսապ ավանը և շրջակա 10 գյուղերը:

թյամբ հայաթափվեց։ Երեք ամիս անց, այնուամենայնիվ, սիրիական կառավարական զորքերը կարողացան ազատագրել հայկական շրջանը, և այնտեղից հեռացած հայությունը սկսեց աստիճանաբար վերադառնալ։ Ներկայում Քեսապը կրկին հայկական է։

Միակ համայնքը, որ դեռևս չի ապաքինվում պատերազմի վերքերից, Դեր-Զորի հայ համայնքն է։ Ահաբեկիչների կողմից այդ շրջանի գրավումից և հայկական Սրբոց Նահատակաց եկեղեցու պայթեցումից հետո այնտեղի հայությունը գրեթե ամբողջությամբ հեռացավ։ Ներկայում էլ, չնայած շրջանն ազատագրված է, սակայն հայերի՝ Դեր-Զոր վերադառնալու մասին տեղեկություններ հայտնի չեն, հակառակ ավերված եկեղեցու վերականգնման տեսլականներին։

Սիրիայի մյուս հայաշատ շրջանները՝ Դամասկոսը, Հոմսը, Լաթաքիան, Ղամիշլին և այլն, չեն եղել ուժգին և տևական ռազմական գործողությունների թատերաբեմ։ Հետևաբար, այս բնակավայրերի հայ համայնքները համեմատաբար քիչ են տուժել սիրիական պատերազմի հետևանքով։ Ներկայում սիրիահայության ընդհանուր թվաքանակը կազմում է 20-25 հազար, ինչը թույլ է տալիս խոսել համայնքի կարգավիճակով այնտեղ հայկական ներկայության մասին։

2. Համայնքային կառույցների գործունեությունը։ Հակառակ կրած հսկայական գույքային վնասներին և աննպաստ պայմաններին՝ սիրիահայ համայնքի կազմակերպչական կառույցները՝ եկեղեցական, կուսակցական, տեղեկատվական, կրթական, մարզամշակութային և այլ հաստատությունները, շարունակեցին ոչ միայն իրենց գոյությունը, այլև կենսագործունեությունը։ Ներկայում, երբ պայմանները համեմատաբար ավելի նպաստավոր են, վերջիններս ակտիվացնում են պատերազմի հետևանքով խաթարված իրենց գործունեությունը, ինչը գլխավոր գրավականներից է որպես համայնք սիրիաբնակ հայերի պահպանման։

3. Պետության կողմից սիրիահայության՝ որպես առանձին համայնքի կամ ազգային փոքրամասնության կարգավիճակի պահպանումը։ Սույն հանգամանքը դրսևորվում է ինչպես հայերի՝ որպես առանձին համայնքի, ներկայացուցիչների ընդգրկվածությամբ Սիրիայի օրենսդիր մարմնում, այնպես էլ համայնքային ղեկավար կառույցների հետ Սիրիայի կենտրոնական և տարածքային իշխանական մարմինների շփումնե-

րով։ Ինչ վերաբերում է Սիրիայի խորհրդարանում հայ համայնքի ներկայացվածությանը, ապա վերջինիս հատկացվում է երկու պատգամավորական մանդատ։ Ներկայում Սիրիայի օրենսդիր մարմնում հայ համայնքը ներկայացնում են Բերիո հայոց թեմի մամուլի խոսնակ Ժիրայր Ռեհիսյանը և պատմաբան, գրող, Սիրիայի գրողների միության անդամ Նորա Արիսյանը։ Հայկական համայնքային ղեկավար կառույցների հետ սիրիական իշխանությունների շփումների պահով որպես վերջին ամենաթարմ օրինակներ կարող ենք նշել հետևյալը.

- 2018թ. ապրիլի 21-ին նախագահ Բաշար ալ Ասադի և առաջին տիկնոջ կողմից Բերիո հայոց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Շահան սրբ. արքեպիսկոպոս Սարգսյանի գլխավորած պատվիրակության ընդունելությունը;
- Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ Սիրիայի վարչապետ Իմադ Խամիսի գլխավորած պատվիրակության այցելությունները Հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիներ և հանդիպումները համապատասխանաբար Բերիո հայոց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Շահան սրբ. արքեպիսկոպոս Սարգսյանի և Սիրիայի հայ ավետարանականների համայնքապետ, վերապատվելի Հարություն Սելիմյանի հետ;
- 2018թ. փետրվարի 28-ին Դեր-Զորի նահանգապետ Աբդ ալ Մաջիդի հանդիպումը Բերիո հայոց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Շահան սրբ. արքեպիսկոպոս Սարգսյանի գլխավորած պատվիրակության հետ, որին հաջորդեց համատեղ այց Սրբոց Նահատակաց հուշահամալիր, ապա՝ Մեծ մզկիթ։

Այս բոլոր հանդիպումների ժամանակ ընդգծվում է սիրիահայության՝ որպես սիրիական բազմազգ և բազմակրոն հասարակության անբաժան մասը լինելու հանգամանքը և նրա ներգրավման կարևորությունը հետպատերազմյան Սիրիայի վերականգնման և բարգավաճման գործում։

Ներկայի հիմնական խնդիրները

Ներկայում, բացի վնասված համայնքային գույքի (եկեղեցիներ, դպրոցներ և այլն) վերականգնումից, հայկական կառույցների գործունեության ակտիվացումից և այդ կերպ համայնքային կյանքի վերաշխուժացումից,

կարելի է մատնանշել Սիրիայի հայության առջև ծառացած ևս երկու խնդիր՝ անվտանգության վերջնական հաստատում և կենցաղային պայմանների բարելավում:

Առաջին խնդրի կապակցությամբ նշենք, որ, չնայած պատերազմի ակտիվ փուլն ավարտվել է, այնուամենայնիվ, դեռևս դեռևս վաղ է խոսել վերջնական խաղաղության հաստատման մասին: Սիրիայի առանձին շրջաններում պահպանվում են ահաբեկչական խմբավորումների մնացորդներ, որոնք ժամանակ առ ժամանակ պայքար են մղում կառավարական զորքերի դեմ: Այդ բախումների հետևանքով տուժում է նաև քաղաքացիական բնակչությունը, այդ թվում՝ հայ համայնքի ներկայացուցիչները: Որպես օրինակ նշենք, որ սույն թվականի փետրվարին հրթիռակոծության են ենթարկվել Դամասկոսի մի շարք թաղամասեր, որի հետևանքով վիրավորվել է երկու հայ, ջախջախվել է Ազգային միացյալ վարժարանի աշակերտների համար նախատեսված փոխադրակառքը, վնասվել Հայ Առաքելական Ս.Սարգիս եկեղեցին:

Բացի ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող տեղական բախումներից, սիրիահայ համայնքին որոշակի անհանգստություն են պատճառում նաև սույն թվականի հունվարից Աֆրինում թուրքական զորքերի ծավալած ռազմական գործողությունը և այդ շրջանի ռազմակալումը վերջիններիս կողմից: Անհանգստացնող է հատկապես այն հանգամանքը, որ այդ շրջանը բավական մոտ է գտնվում հայկական Քեսապին: Իսկ Թուրքիայի աջակցությամբ ահաբեկչական խմբավորումների կողմից հարձակման ենթարկվելու փորձառությունը դեռևս վառ է Քեսապի հայերի հիշողության մեջ:

Ինչևէ, անվտանգության ապահովման հարցում մնում է միայն ապավինել սիրիական կառավարական բանակի և նրա դաշնակիցների վերջնական հաղթանակին, քանի որ այլ տարբերակներ, բացի հայրենադարձությունից, այս պահին արդյունավետ չեն:

Ինչ վերաբերում է կենցաղային պայմանների բարելավմանը, ապա այս հարցում գործունեության ամենամեծ ասպարեզը Հալեպն է, քանի որ. ա) այն առավել շատ է տուժել պատերազմից, բ) այնտեղ է կենտրոնացած սիրիահայ համայնքի հիմնական մասը[2]: Ինչպես հաղորդում է Սի-

[2] Պատահական չէ, որ Հալեպի հայ համայնքը համարվում էր սիրիահայ մայր գաղութ:

րիայի խորհրդարանի պատգամավոր Ժ.Ռեհիսյանը, Հալեպի ազատագրումից հետո սիրիական իշխանությունները քայլեր են ձեռնարկում այնտեղ բնականոն կյանքը վերականգնելու ուղղությամբ: Աստիճանաբար վերակառուցվում են քաղաքի ենթակառուցվածքները, վերականգնվում է սննդի, վառելիքի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարումը:

Հարկ է նշել, որ հետպատերազմյան շրջանի բարդությունները հաղթահարելու գործում հալեպահայությանն աջակցություն են ցուցաբերում նաև Հայաստանը և Սփյուռքի մյուս համայնքները: Մասնավորապես, Հալեպի ազատագրումից հետո մի քանի անգամ ՀՀ կողմից մարդասիրական օգնություն է ուղարկվել Սիրիա, որի մի մասը բաժին է հասել հայ համայնքին: Մարդասիրական օգնությունն ընդգրկում էր առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ սնունդ, հագուստ, դեղորայք և այլն: Սփյուռքի կողմից հալեպահայությանը ցուցաբերվող աջակցության տեսակետից նշանակալի է ԱՄՆ-ում հիմնադրված Սիրիահայությանն աջակցության հիմնադրամի գործունեությունը: Սույն թվականի հունվարին հիմնադրամը հանգանակությունների միջոցով $175 հազարի աջակցություն է ցուցաբերել հալեպահայությանը, որը հիմնականում ուղղված է հայկական տնտեսվարող ձեռնարկությունների (արհեստանոցներ և այլն) վերականգնմանը և կրթական խնդիրների լուծմանը: Այսպիսով, եթե Հայաստանից առաքվող օգնությունը նպատակաուղղված էր սիրիահայության առաջնային կարիքների բավարարմանը, ապա Սփյուռքից եկող օգնությունը հիմնականում միտված է Հալեպի հայ համայնքի ենթակառուցվածքների վերականգնմանը:

Համայնքի կենսագործունեության հիմնական ուղղությունները. քաղաքականություն, գիտություն

Հետպատերազմյան շրջանի վերականգնումը կամ վերազարթոնքը Սիրիայի հայ համայնքի համար նշանակում է նրա կենսագործունեության ակտիվացում տարբեր բնագավառներում: Հոգևոր, կրթական, տեղեկատվական, մարզամշակութային ասպարեզներում համայնքի կենսագործունեությունն ինքնին հասկանալի է: Նշենք միայն, որ հիշյալ բնագավառներում համայնքն իր կենսագործունեությունը չի դադարեցրել անգամ պատերազմի ամենաթեժ շրջանում: Իսկ հետպատերազմյան շրջանում փոր-

ձում է վերականգնել նախկին աշխուժությունը: Տնտեսական ոլորտի մասին հարկ է նշել, որ սիրիահայությունը մինչ պատերազմը ունեցել է նշանակալի տնտեսական ներուժ: Համայնքում եղել են ինչպես խոշոր, այնպես էլ միջին ու մանր գործարարներ: Այնուամենայնիվ, ներկայում սիրիահայության տնտեսական գործունեության վերականգնումը մեծապես պայմանավորված է այդ երկրում խաղաղության վերջնական հաստատմամբ և ենթակառուցվածքների (գործարաններ, ճանապարհներ և այլն) վերականգնմամբ: Հետևաբար, նպատակահարմար ենք գտնում մի փոքր մանրամասն ներկայացնել հետպատերազմյան շրջանում հայ համայնքի կենսագործունեությունը քաղաքականության և գիտության բնագավառներում:

Քաղաքական ասպարեզում հայությանը հուզող խնդիրների հետ մեկտեղ հայ համայնքի գործունեության ուղղություններից է մասնակցությունը հետպատերազմական Սիրիայի պետականաշինության գործընթացին և նրա մարտահրավերների դիմագրավմանը: Առաջին խնդրի տեսակետից նշանակալի երևույթ էր սույն թվականի հունվարի վերջին Սոչիում միջսիրիական խորհրդաժողովին հայ համայնքի մասնակցությունը: Խորհրդաժողովի հիմնական նպատակն էր Սիրիայի նոր սահմանադրության վերաբերյալ քննարկումը: Հայ համայնքից խորհրդաժողովին մասնակցեց հոգևոր և աշխարհիկ շուրջ տասը գործիչ: Այս երևույթը ոչ միայն վկայում է հայ համայնքի քաղաքական գործոն լինելու մասին, այլև սիրիական պետության կողմից որպես առանձին համայնք կամ ազգային փոքրամասնություն դիտվելու ևս մեկ ապացույց է: Ընդհանուր սիրիական պետության մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից հայ համայնքի քաղաքական գործունեության մասին է վկայում 2018թ. ապրիլի 22-ին Հալեպում Սիրիայի Հայ դատի հանձնախմբի կազմակերպած բողոքի ցույցն ընդդեմ Աֆրինում թուրքական ռազմական գործողությունների: Բողոքի ցույցին մասնակցում էին նաև Սիրիայի այլ ազգությունների (արաբներ, ասորիներ, հույներ և այլն) ներկայացուցիչները՝ ընդհանուր մարտահրավեր տեսնելով Սիրիայի տարածքում թուրքական բանակի գործողությունների կապակցությամբ:

Գիտական կյանքը սիրիահայ համայնքում ընթանում է հետևյալ հիմնական ձևերով.

- *Հետազոտական աշխատանքների հրատարակում*[3]*:* Այս առումով նշանակալի է 2017թ. վերջին Հայկազ Թրթռյանի «Քեսապի պզտիկ հանրապետութիւնը. 1919-1922», 2018թ. Նորա Արիսյանի «Հայերի տարագրությունը Դեր Զորում. XIX դարի վերջ և XX դարի սկիզբ» գրքերի հրատարակումը:
- *Գրքերի շնորհանդեսներ:* Հալեպում 2018թ. հունվարի 23-ին տեղի է ունեցել Հրայր Ջեբեջյանի[4] «Երիտասարդ ընտանիքին Աստվածաշունչը», հունիսի 29-ին՝ Լևոն Զաքի Եդալյանի[5] «Գործ և գանձ» գրքի շնորհանդեսը:
- *Սիրիահայ գիտնականների մասնակցությունը տարբեր գիտաժողովների:* Այդպիսի օրինակ է Նորա Արիսյանի մասնակցությունը 2018թ. հունվարի 20-ին Դամասկոսում տեղի ունեցած «Ազգային ինքնությունը Սիրիայի ճգնաժամի լույսի ներքո. ընթերցումներ և ակնարկներ» գիտաժողովին (զեկույցի թեման՝ «Սիրիական ինքնությունը և սիրիահայերը՝ իբրև մշակութային բազմազանության օրինակ»):
- *Գիտական աշխատանքների ցուցահանդեսներ:* Այս առումով հետաքրքիր է արդեն երկրորդ տարին անընդմեջ կազմակերպվող Հայ ավետարանական վարժարանների «Աշակերտական գիտական ցուցահանդեսը»[6]:
- *Դասախոսություններ:* Այս տեսակետից լավ օրինակ է ՀՄԸՄ հիմնադրության 100-ամյակի տոնակատարությունների շրջանակներում Հալեպում 2018թ. հունվարի 18-ին ՀՄԸՄ Սիրիայի շրջանային վարչության Մամուլի հանձնախմբի կազմակերպած դասախոսությունը՝ «Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում նահատակված և մահացած հայ մարզիկները և ՀՄԸՄ հիմնադրությունը» խորագրով (դասախոս՝ հալեպահայ գրող, Հայ ծերանոցի տնօրեն, Սիրիայի Հայ սև գոտիների ակադեմիայի տնօրեն Ավո Գաթրճյան):

[3] Հալեպում գործում է հայկական «Արևելք» հրատարակչությունը:
[4] Աստվածաշնչի ընկերության Ծոցի խնամակալ մարմնի ընդհանուր քարտուղար:
[5] Հայ-սիրիական գործարարների խորհրդի նախագահ, Հալեպի առևտրական գրասենյակի տնօրեն խորհրդի անդամ:
[6] Տե՛ս Հայ Աւետ. Վարժարաններու Սուրիոյ եւ Հալէպի Մակարդակով Բարձրորակ Գիտական Ցուցահանդէս, http://hayernaysor.am/cl/archives/276285

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՐԻԹԻՇ ՓԵԹՐՈԼԻՈՒՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ

Արմեն Մանվելյան[*]

Բրիտանական հայտնի Բրիթիշ փեթրոլիում (*BP*) ընկերությունը՝ աշխարհի խոշորագույն նավթ և գազ արդյունահանող միջազգային կառույցը, զբաղվում է նաև էներգետիկ համաշխարհային շուկայի ուսումնասիրությամբ: Այդ ուսումնասիրությունները ամեն տարի հունիսի վերջին ներկայացվում են հանրությանը և դառնում հետազոտական և վերլուծական աշխատանքներ գրելու կարևորագույն աղբյուր:

Նկատենք, որ *BP*-ն միակ կազմակերպությունը չէ, որ նմանատիպ հետազոտական զեկույցներ է տպագրում: Էներգետիկ հիմնախնդիրների ուսումնասիրողների համար կարևոր են նաև ՕՊԵԿ տարեկան զեկույցները, որոնցում հատկապես մեծ տեղ են հատկացվում նավթի և գազի շուկաների զարգացման միտումներին՝ ուղղված ապագային:

Ուշագրավ են նաև Միջազգային էներգետիկ գործակալության (*IEA*) տարեկան զեկույցները, որոնցում կարևորվում են հատկապես սպառող պետությունների շահերը և հնարավորությունները՝ միասնական քայլերով ազդել նավթի և գազի շուկաների ու դրանց գնագոյացման քաղաքականության վրա: Ուսումնասիրողների համար առաջնային են նաև ԱՄՆ էներգետիկայի նախարարության տարեկան զեկույցները (*Energy Information Administration-EIA*), որոնցում մեծ տեղ են տրվում այդ բնագավառում նորարարական տեխնոլոգիաներին, վերականգնողական էներգետիկային, դրանց զարգացման միտումներին և այլն:

Այսօր, սակայն, կանգ կառնենք հենց *BP*-ի տարեկան զեկույցի վրա, որը կոչվում է Համաշխարհային էներգետիկայի վիճակագրության դիտարկում (*Statistical Review of World Energy*)[1]: Այս զեկույցները հրատա-

[*] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ.:

[1] BP Statistical Review of World Energy-2018, https://www.bp.com/content/dam/bp/en/corporate/pdf/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf

րակվում են արդեն 67 տարի և ռազմավարական նշանակություն ունեն թե՛ առանձին հետազոտողների և թե՛ էներգետիկ աշխարհաքաղաքականությամբ զբաղվող գիտական ու ակադեմիական ինստիտուտների և կենտրոնների համար:

Տասը գլխից բաղկացած այս վիճակագրության նպատակն է ցույց տալ էներգետիկ համաշխարհային շուկայի կառուցվածքը՝ առկա ռազմավարական պաշարները, դրանց արդյունահաման հզորություններն աշխարհում և սպառման ծավալները: Ամեն տարվա հունիսին հրատարակվող այս զեկույցներն ամփոփում են նախորդ տարվա տվյալները, այսինքն՝ 2018թ. հունիսին հրատարակվել է 2017թ. էներգետիկ վիճակագրությունն ամբողջ աշխարհում ընդհանրապես, և առանձին վերցրած պետություններում՝ մասնավորապես:

Այսպես, զեկույցի առաջին գլխում, որը կոչվում է Առաջնային էներգակիրներ (*Primary energy*), ներկայացվում են էներգետիկ սպառման ծավալներն ամբողջ աշխարհում, որն այս պահին կազմում է մոտ 13 մլրդ տոննա նավթային համարժեք (տ.ն.հ.): Տ.ն.հ.-ն համարժեք է մոտ 7.3 բարել նավթի կամ 11.6 ՄՎտ/ժ էլեկտրաէներգիայի: Չափման նման միավորով փորձ է արվում ցույց տալ տվյալ պետությունում էներգակիրների ընդհանուր սպառումը, տվյալ դեպքում հաշվառվում է նավթի, գազի, ածխի, միջուկային էներգիայի, հիդրոկայանների, վերականգնողական էներգիայի սպառումը թե՛ առանձին պետություններում և թե՛ աշխարհում:

Ըստ *BP*-ի վերջին զեկույցի՝ աշխարհի թիվ մեկ սպառողը վերջին տարիներին շարունակում է մնալ Չինաստանը՝ 3 մլրդ 130 մլն տ.ն.հ. չափով, ինչը կազմում է աշխարհում սպառվող էներգակիրների 23%-ը: 2016թ. համեմատ Չինաստանում էներգակիրների պահանջարկի աճը կազմել է 3.1%, այն դեպքում, երբ նախորդ 10 տարիներին այդ երկրում էներգակիրների նկատմամբ պահանջարկն աճում էր միջինը 4.4%-ով: Նման միտման պատճառը Չինաստանում տնտեսական աճի շարունակական դանդաղումն է, որն էլ հանգեցնում է նաև էներգակիրների նկատմամբ պահանջարկի դանդաղմանը:

2 մլրդ 234 մլն տ.ն.հ. էներգակիրներ սպառող երկրորդ պետությունը ԱՄՆ-ն է, ինչը կազմում է աշխարհում սպառվող էներգակիրների 16.5%-ը: 2016թ. համեմատ էներգակիրների սպառման աճն այս երկրում կազմել է մոտ 0.6%, ինչը, նկատենք, բացառիկ է այդ պետության համար, քանի որ

նախորդ 10 տարիներին այստեղ էներգակիրների սպառման ծավալների կայուն նվազում էր գրանցվում տարեկան միջինը 0.3%-ով: Այս միտումները բացատրվում են ԱՄՆ տնտեսությունում վերջին տարիներին նկատվող լճացման երևույթներով և էներգախնայող համակարգերի ակտիվ ներգրավմամբ: Համեմատության համար ասենք, որ, օրինակ, 2007թ. ԱՄՆ-ում ավելի շատ էներգակիրներ էին սպառում, քան 2017թ.:

Սպառման ծավալներով երրորդ պետությունը Հնդկաստանն է, որը, սակայն, էականորեն զիջում է առաջին և երկրորդ տեղերը զբաղեցնող Չինաստանին և ԱՄՆ-ին, 753 մլն տոննա նավթ կամ համաշխարհային սպառման 5.6%-ը: Այստեղ ևս նկատվում է պահանջարկի կայուն աճ, ու եթե նախորդ 10 տարիներին այն կազմել էր միջինը 4.6%, ապա 2017թ. աճը եղել է արդեն 5.7%: Սա նշանակում է, որ հետագայում էներգակիրների պահանջարկի հիմնական շուկան կարող է դառնալ Հնդկաստանը:

Ռուսաստանի Դաշնությունն այս ցուցակում զբաղեցնում է 4-րդ հորիզոնականը՝ տարեկան 698 մլն տ.ն.հ. էներգակիրների սպառման ծավալներով, ինչը կազմում է աշխարհում սպառվող ծավալի 5.2%-ը: Այստեղ ևս նկատվում է սպառման ծավալների թեև ոչ մեծ, սակայն կայուն աճ: 2017թ. այն եղել է 0.3%, իսկ անցած տասը տարիներին՝ միջինը 1.5%:

Եվ վերջապես, «պատվավոր» այս ցուցակի 5-րդ հորիզոնականը զբաղեցնում է Ճապոնիան՝ 456 մլն տ.ն.հ. էներգակիրների սպառման ծավալով, ինչը կազմում է աշխարհի սպառման մոտ 3.4%-ը: Ճապոնիայում, ինչպես և զարգացած մյուս պետություններում, պայմանավորված տնտեսական լճացումով և էներգախնայող համակարգերի ներդրմամբ, էներգակիրների սպառումը նվազում է, այն 2017թ. կազմել է մինուս 1.6%:

BP-ի վիճակագրությունը, բացի սպառման ընդհանուր ծավալները նշելուց, ցույց է տալիս, թե վառելիքի հատկապես ինչ տեսակներ են նախընտրում այս կամ այն պետությունները և, վերջապես, ինչ դինամիկա կա այդ վառելիքների սպառման ծավալներում: Սա հնարավոր է՝ համեմատելով 2016թ. և 2017թ. էներգակիրների սպառման ծավալներն ու այնտեղ տարբեր տեսակի վառելիքների աճի կամ նվազման միտումները համեմատելով միմյանց հետ:

Ամփոփելով *BP*-ի վիճակագրական զեկույցի առաջին գլուխը՝ պետք է նկատենք, որ այստեղ տրվում է նաև էներգակիրների սպառման ծավալներն ըստ տեսակների և ըստ տարածաշրջանների: Այսպես, էներգա-

կիրների սպառման ծավալի աճը 2017թ. ամբողջ աշխարհում կազմել է մոտ 2.2%, ինչն ավելին է, քան 2016թ., երբ այն կազմել է ընդամենը 1.2%:

Էներգակիրների սպառման ծավալում բոլորից շատ օգտագործվում է նավթը՝ մոտ 38%, 1992թ. նավթը կազմում էր ընդհանուր սպառման մոտ 50%-ը, երկրորդը ածուխն է՝ 24%, այս էներգակրի նկատմամբ հատկապես մեծ պահանջարկ կա զարգացող պետություններում և առաջին հերթին՝ Հնդկաստանում: Բավական մեծ տեմպերով աճում է պահանջարկը գազի նկատմամբ՝ 20%, 1992թ. դրա պահանջարկը հազիվ 10% էր:

Որպեսզի պատկերը համապարփակ լինի՝ տրվում է նաև էներգակիրերի սպառման դինամիկան ըստ տարածաշրջանների: Այսպես, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, ինչպես նաև Աֆրիկայում սպառվող հիմնական վառելիքը նավթն է: Այն կազմում է սպառվող վառելիքի 40-45%-ը: Միջին Արևելքում և ԱՊՀ երկրներում գերիշխում է գազը՝ 50-55%: Ասիա-խաղաղօվկիանոսյան պետություններում առաջնայինն ածուխն է՝ մոտ 48%, իսկ Եվրոպայում սպառման շուկան համեմատաբար հավասարակշռված է. նավթը՝ 35%, գազը՝ 25%, ածուխը՝ 15%, միջուկային էներգետիկան՝ 10%, վերականգնողականը՝ 8% և այլն:

Ներկայացված գծապատկերներից նաև պարզ է դառնում, որ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը դառնում է էներգակիրների սպառման հիմնական շուկան: Նավթի համաշխարհային սպառման մոտ 37%-ն իրականացվում է վերը նշված տարածաշրջանում, երկրորդը Հյուսիսային Ամերիկան է՝ մոտ 24%: Աշխարհում վաճառվող ածխի առյուծի բաժինը՝ 72%, նույնպես իրականացվում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Վերջինս դոմինանտ է նաև հիդրոէներգետիկայի բնագավառում՝ մոտ 41%, և վերականգնող էներգետիկայում՝ 38%: Թերևս, միայն միջուկային էներգետիկայում առաջատարը դեռ Եվրոպան է՝ 32% և Հյուսիսային Ամերիկան՝ 34%:

Այսպիսով, *BP*-ի 2018թ. հունիսի զեկույցի սպառման բաժնի վիճակագրության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ էներգակիրների սպառման համաշխարհային շուկայում ավարտվել է Հյուսիսային Ամերիկայի և Եվրոպայի գերիշխանությունը: Վերջիններս իրենց դիրքերը վաղուց արդեն զիջել են Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանին, իսկ ավելի կոնկրետ՝ Չինաստանին և արագ տեմպերով զարգացող

Հնդկաստանին: Սա հանգեցրել է էներգետիկ աշխարհաքաղաքական իրավիճակի և պատկերի փոփոխության: Սպառման կենտրոնների տեղափոխումն Արևմուտքից Արևելք հանգեցնում է նրան, որ արդյունահանող պետությունները՝ Միջին Արևելքի, Աֆրիկայի, Կենտրոնական Ամերիկայի երկրները և Ռուսաստանն իրենց ուշադրությունը բևեռել են դեպի Չինաստան և Հնդկաստան:

Տեղի ունեցող էներգետիկ աշխարհառազմավարական տեղաշարժը (սպառման ծավալում) հանգեցնում է Արևմուտքի դերի նվազմանն այս համակարգում և Հարավարևելյան Ասիայի նշանակության բարձրացմանը: Վերջիններս նաև սկսում են ազդել էներգակիրների ընդհանուր գնագոյացման քաղաքականության վրա, ինչն իր հերթին հանգեցնում է նրան, որ սկսում են կարևորվել Սինգապուրի կամ Հոնգկոնգի բորսաները, իսկ Չինաստանը շրջանառության մեջ է դնում նավթային կամ ոսկե յուան կոչվող դրամական միջոցները էներգակիրների վճարման համար՝ այսպիսով նվազեցնելով դոլարի նշանակությունն առևտրային գործարքների իրականացման գործընթացում:

(Շարունակելի)

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 25.07.2018թ.
Թիվ 6 (95), 2018թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում